

ՏԱՃԱՐ

ՃՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՋԱՐՄԱՅԻ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻԻԲԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

— ՇԱԲԱԹ, 10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911 —

ԹԻԻ 48

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կա՞յ Աստուած (2.)

ՍԻՒՆՆԱՅ ԴՊՐՈՑ — (Թ.) Վրթանէս քերթող

Վաղուան կեանքը (քերթուած)

Սուրբ Դիրքը

Կրօն եւ իկեղեցի

Բաճանախ իր երկրին եւ օտարութեան մէջ

ՄԱՍՂՈՑ ԱՐՋԱԳԱՆԴ. — Ամերիկահայոց գործեր. —

Վտանգը՝ Ատանայի մէջ

ԱԶԳ. ԿԵԱՆԻԲ. — Նորընտիր Պատրիարքը. — Շաբթուան

կարեւոր լուրեր

Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

ԳՆԷԼ Ծ. Վ. ԳԱԼԵՄԵԱՐԵԱՆ

ԴՊՐԵՎԱՆՔՅԻ

Թարգմ. Անդ. Կ

ԱՐՄԱՆԱՄ ԹԱԼՈՅԱՆ

ՅՈՒՍԻԿ ՔԶ. ԱՇՃԵԱՆ

«ՏԱՃԱՐ»-ի թի՛ վարչական եւ թի՛ խմբագրական գործերուն համար պէտք է
դիմել առ Զարմայր Բահանայ Կեօղիւրեան, Կ. Պոլիս, Պեթիկթաշ, Հայոց Սկեղեցի

بشيكطاش ارمنى كليسا سنده «داجار» غزتمى مديرى باباس زارماير افندى

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԲԱՅՈՒՍԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
«ՏԱՃԱՐ» Ի ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԻՆ

Տաճար իր երկրորդ չրջանին վերջին ամիսը թեւակոխելու առթիւ, լի վստահութեամբ՝ իր ձեռնարկած գործին օգտակարութեան և տեւականութեան վրայ, կը բանայ այժմէն իր երրորդ շրջանի բաժանորդագրութիւնը:

Այս առթիւ կը փութանք յայտնել թէ ժողովուրդին մէջ Դրիստոնէական կրօնքի և Հայ Եկեղեցիի սէրը սրծաքոծելու ազնիւ նպատակին աւելի՛ ուժգնութեամբ ու եռանդով ծառայել պիտի աշխատի Տաճար յառաջիկայ երրորդ չրջանին, որու միջոցին որոշ ուղղութեամբ մը պիտի ունենայ միշտ:

Ա. Հոգեւոր կեանքի բաժինը:

Բ. Հայ վկայաբանութեան բաժինը:

Գ. Կրօնքի յառիսեմական ճշմարտութիւնները ժողովրդական լեզուով մը հաստատող համոզիչ գրութիւններ՝ ինքնագիր կամ երոպական նշանաւոր հեղինակներէ թարգմանաբար:

Դ. Նախնեաց մատենագրութեան ընտելագոյններուն ժողովրդականացումը, ձեռնհաս և հմուտ գրիչներու կողմէ աշխարհաբար թարգմանուելով:

Ե. Թեաղորդիչ պատմութիւններ, որոնք մերթ ընդ մերթ պիտի երեւան այս սիւնակներուն մէջ, իբրեւ գործնական օրինակ մը ազնիւ զգացումներու, և թելադրող մը բարձր մտածումներու:

Զ. Ս. Գրական ուսումնասիրութիւններ:

Միւս կողմէ, արդարացիելու համար թերթին գրական հանդամանքը, խմբագրութիւնն ղեկավար ըրած է ազգին մէջ ամէնէն աւելի սիրուած գրողներու, իրենց հիւժեղ ուսումնասիրութիւններով զարդարելու Տաճարի սիւնակները:

Ազգային բաժինին մէջ ամէն շաբթու պիտի ամփոփուին շարժումն կարեւորագոյն լուրերը, գոհացում տալու համար առաւելագէտ գաւառի և արտասահմանի մեր այն հեռաւոր բաժանորդներուն, որոնք Տաճարէն օերիշ թերթ չին ստանար:

«ՏԱՃԱՐ» Ի ԹՈՒՐԲԵՐԷՆ ԲԱԺԻՆԸ

Տաճար իր երկամեայ գոյութեան չրջանին մէջ, տարածուելով գլխաւորաբար հայախօս գաւառներու մէջ, մասամբ միայն կրցաւ կատարել իր պարտականութիւնը: Բայց Փոքր Ասիոյ արեւմտեան կողմը շատ քաղաքներու մէջ Հայութիւնը զժբախտաբար կորսնցուցած է իր մայրենի լեզուն: և չունի թերթ մը ուր խօսուի իրեն Հայրենի կրօնքին վրայ, Հայ առաքելական Եկեղեցւոյ ոգիով:

Անցեալ տարիէն զանազան կողմերէ խնդրանքներ եղած էին խմբագրութեան, գոհացում տալու այս պէտքին ալ, բայց համարձակութիւնը պակսեցաւ մեզի, գործին նիւթական դժուարութիւնը աչքի առջև ունենալով:

Նոյն դժուարութիւնները կան այսօր ալ, քանի որ Տաճար, իր ներկայ վիճակով, հազիւ թէ կարող կ'ըլլայ իր գոյութիւնը պահել: Բայց պէտքին ստիպողականութիւնը և բարեկամական յորդորներ ու քաջալերանքներ՝ կը մղեն զմեզ փորձ մը ընելու:

Հետեւագէտ երրորդ չրջանի առաջին թիւէն սկսեալ կ'առաջադրենք — թերթիս 16 էջ հայերէնի մասը անփոփոխ պահելով — յաւելումական ուր կ'ըլլէր մայր հայաստան թուրքերէն լեզուով և հոգեշահ լավանդակութեամբ:

Ասիկա պիտի շարունակուի անխափան երեք ամիս. և եթէ երբեք ժողովրդային քաջալերութիւնը գայ աջակցիլ մեր ջանքերուն, պիտի շարունակուի ընդմիշտ:

Հետեւագէտ Տաճար յառաջիկայ երրորդ չրջանին փոխանակ տալու ինքն իր կողմէ, պիտի հրատարակուի խանդավառ երես, ՆՈՅՆ ՄՆԱԼՈՎ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄՈՆՆԵՐԸ՝ այն է Պիլոսի և գաւառաց համար 40 դր., և արտասահմանի համար 10 ֆր., կամ 2 տոլար, կամ 4 րուբլի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՏԱՋԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

— ՇԱԲԱԹ, 10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911 —

ԹԻԻ 48



ԱՄԵՆ. Տ. ՅՈՎՀԱՆՆԵՍ Ս. ԱՐՔԵՊ. ԱՐՇԱՐՈՒՆԻ
ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԺ ԹՈՒՐԲԻՈՅ
(ԸՆՏՐՈՒԱԾ 1911 ԴԵԿՏ ԶԻՆ)

ԿԱՅ ԱՍՏՈՒԱԾ

2. (*)

Կայ Աստուած մը. — Այո՛, մեր սննդա-
կան փորձառութիւնը եւ այդ մասին ուրիշ
հաւատալիքներ զայդ կ'ապացուցանեն:

Ետ երթանք ուրիշ որ սկսանք: Մեր
սու Աստուած հաւատքը՝ պատճառաբանեալ
փաստերու հարց մը չէ — թէ և ատկա զանց
ըրած չենք, ոչ ալ խնամոտ քննութիւններու
մասին անփոյթ գտնուած —, ոչ թէ որով-
հետեւ անոնք չեն կրնար արուիլ, այլ
որովհետեւ անկա անձնական խորունկ
համոզումի և երանաւէտ փորձառութեան
խնդիր մըն է:

1. Տքդ. Տէյլ կը պատմէ թէ ինչպէս
ընկեր մը իր ժողովին մէջ զԱստուած ճանչ-
նալու եկաւ:

Այդ բարեկամը կը պատմէ. — «Անգլիոյ
հարաւային նահանգներէն միոյն՝ փոքր
գիւղաքաղաքի մը մէջ կը բնակէի, և շա-
բաթ օր մը քաղաք գացի պտուղի համար:
Ամառ էր, և քանի մը մղոն քալելէ յետոյ,
բլուրի մը վրայ պառկեցայ: Տեսայ որ
հեռաւոր հորիզոններու տակ, մարգագե-
տիներ, մրգատաններ և ցորենադաշտեր
տարածուած էին. անոյն երկինք՝ շքեղ-
օրէն կապոյտ, և արեւը՝ երկինք ու
երկիր կ'ողողէր իր ճառագայթներով: Հիւ-
նալի գեղեցկութիւնը զիս լեցուց յուզ-
մունքով ու բերրութեամբ: Եւ այն ատեն,
յանկարծ, այդ բոլորին մէջէն տեսայ որ
հոն Աստուծոյ իրական փառքը յայտնու-
եցաւ: Զգացի որ Ան հոն էր: Իր ներ-
կայութիւնը, իր կարողութիւնը և իր բա-
րութիւնը տիրապետեց վրաս, և ազօթքի
պահ մը ընծայեց ինձ»:

Եւ, տոբղորդ գեղեցկապէս կ'աւելցնէ.
«Բարեկամս ճանչցած էր իր բարի Աստ-
ուածը (Wordsworth), և կը յիշէր այս
պատահարը՝ իբրեւ իր անձնական փորձա-
ռութիւնը յատկանշող բան մը, իբրեւ լա-
ւածանօթ դէպքը, թիւթըն Աբրայարանի
մօտիկ շրջակայքէն կապուած»:

2գացի

Ներկայութիւն մը, որ քիչ ոգեւորեց ցնծութեամբ
վերացնող խոկումներու. վեհ զգացում մը՝
Հեռաւոր խորութենէ արտազեղած,

(*) Ե. յօդուածը տես թիւ 44:

Որուն ալը, մայրամուտ արեւին ճառագայթներուն,
Անճայրածիր ովկէանին, և կենդանարար օդին,
Կապոյտ երկինքին ու մարդու մտքին մէջն է.
Շարժում մը, և Հոգի մը, որ կը վարէ
Բոլոր խորհող էակները. բոլոր խորհողաւոր ա-
ւարկաները,
Եւ ամէն բանի մէջ կը թրթռայ:

2. Կան բազմաթիւ անհատներ, որոնք
կը հաւատան Աստուծոյ, քանզի անձնա-
կան հաղորդակցութիւն ունին Աստուծոյ
հետ: Միա զիր թէ ինչ կ'ըսէ Տքթ. Թօր-
րէյ՝ Ամերիկացի մեծ աւետարանիչը՝ որ
Մր. Չարլս Ալեքսանարի հետ երկրին չըր-
ջանն ըրած է. «Գիտեմ թէ Աստուած կայ,
քանզի, կեանքի բոլոր օրերուն մէջ, Անոր
հետ անձնական հաղորդակցութիւն ունիմ:
Սրամիտ փիլիսոփաներ կրնան յերկրի
ճշմարտանման պատճառ մը ապացուցա-
նելու ինձ թէ Չարլս Ալեքսանարի նման
անձ մը չկայ. բայց այդ բոլոր բնաւծնե-
րէն յետոյ, ասկաւին գիտեմ թէ կայ,
քանզի կեանքիս բոլոր օրերը անոր հետ
ամենասերտ յարաբերութիւն ունեցած եմ:
Բայց ես, ա՛յլ աւելի սերտ յարաբերութիւն
ունեցած եմ Աստուծոյ հետ, քան Չարլս
Ալեքսանարի հետ: Մր. Ալեքսանարի կե-
նալը գիտնալէն սուս, գիտեմ թէ Աստ-
ուած կայ: Եւ ասիկա, բազմաթիւ մար-
դոց, հարուստներու և ազքստներու,
ուսեայներու և անուաներու, գիտուններու
և փիլիսոփաներու, ամէն սեռի և ամէն
վիճակի մարդերու փորձառութիւնն է:
Անոնք կը հաստատեն, իր սիրոյն, ողոր-
մութեան և կարողութեան անձնական
փորձառութիւնով, թէ կայ Աստուած մը:
Եւ ասիկա եղած է լաւազոյն մարդերու
փորձառութիւնը՝ ամէն դարերու մէջ: Յուդ-
թական կերպով այսօր կրնանք երգել սա-
պէս. —

Ո՛վ Աստուած, մեր օգնականը, անցեալ դարերու
մէջ,

Մեր յոյսը ապագայ տարիներու համար,

Մեր ասպարը մերկալեց փոթորիկներու տոնն

Եւ մեր յաւիտենական տունը (home):

3. Այո՛, չափեր կրնան անկարող զըս-
տան կամ ինչպէս կը ճանչնան զԱստուած,
բայց և այնպէս այդ իրողութեան աւելի
վստահ են, քան ու է ուրիշ բանի՝ ասի-
գիրքի մէջ:

Ենթադրէ որ, վաղը, բանուոր մը՝ ճաշը առնէ այս լաւարանին մէջ, իր գործարանին (տնի) համեմատ: Ան հիւթեղ կերակուրով լեւի-լեցուն որկոր մը պիտի ունենայ: Կուռուկուշտ ուտելէ յետոյ, կ'երեւակայեմ որ, վարպետորդի սկեպտիկ մը գայ և ըսէ իրեն. «Գէորգ, ճաշած էք»: «Այո՛, հոն է, դատարկ որկորիս մէջ»: «Բայց, ինչպէս գիտնամ թէ, անոր մէջ որեւէ բան կայ կամ թէ բան մը կերած էք: Ինչ աղայոյց կրնաք տալ ինձ, թէ բան մը առած էք»: Ստուգիւ ղժուո՛ր հարց, բնախօսական աղայոյցէ զատ, տարբեր պատասխան մը տալ: Բայց Գէորգ կը պատասխանէ. «Անօթութիւնս գնաց: Յագուրդ զգացի»: «Բայց ինչպէս գիտնամ ասիկա» կը հարցնէ հայցաքննիչ սկեպտիկը: Գէորգ հիմա իրական ղժուարութեան մը մէջ է: Բայց, ինչ որ պէ՛տք է, ապացուցանէ կամ ոչ, Ան գիտէ. Ան՝ կշտացած է, թէեւ աւելի անճարակ է զայն ապացուցանելու մէջ, քան իմ հինգ շաբթուան երկխոս, որ կրնայ վաւերական աղայոյցը տալ թէ իր կերակուրը առած է կամ ոչ:

Այսպէս, մենք չենք կրնար ամէն ճշմարտանման աղայոյցներ յարմարցնել, բայց և այնպէս ստիպուին գիտնել: Մեր հոգիները անդորր են: Մեր սրտերը խաղաղ են: Մեր խղճմանքը անխռով է: Մենք կը հաւատանք: Աստուած կայ, զի Աստուած՝ մեր Օգնականը և Բարեկամն եղած է, և Անով գտած ենք յոյս ու կեանք, ուժ և ուրախութիւն, ցնծութիւն և յոյս, և համոզուած ենք Ս. Օգոստինոսի հետ թէ «Մեր սրտերը երբէք չեն կրնար խաղաղիլ, մինչեւ որ Անոր մէջ գտնեն խողաղութիւնը»: Մենք գտած ենք այդ խողաղութիւնը:

—Լաւ, սողոր, ըսաւ մանկամարդ կին մը՝ գիտուն մարդու մը որ իր հաւատքը կը ծաղրէր, երբ նէ կ'ունկնդրէր Պատ. Տէյվիս Սմիթի, ձեր պատճառաբանութեանց չեմ կրնար պատասխանել, բայց ես հոգիի խաղաղութիւն ունիմ: Դուք ունի՞ք:

Տողորին դէմքը կարմրեցաւ և երեսն առաւ փախաւ աւաղեղով, և շատ

մը այս տեսակ ծաղրող և պարտաւորներու պէս, տխրեցաւ ի սրտէ, ոչինչ գիտնալով այս հոգեկան խաղաղութեան և անդորութեան մասին:

4. Այսպէս մենք կը հաւատանք Աստուծոյ: Հարկ է որ հաւատանք Աստուծոյ: Հաւատքով անցանք տարակոյսի գահալէժին վրայէն, և կը վախճանք յաւիտենական ժայռը մեր ստեղծուած տակ գտնելէ: Մենք ապահով հիման վրայ ենք: ԱՍՏՈՒԱՆՔ ԿԱՅ: Մենք կանչեցինք և Ան պատասխանեց: Մենք խնդրեցինք և Ան տուաւ: Մենք բաղիւնեցինք և Ան բացաւ: Իր ներկայութիւնն և օգնութիւնը վայելած ենք գիշեր ու ցորեկ, հիւանդութեան և առողջութեան մէջ, փոթորիկի և խաղութեան մէջ, զբաղմանց և պաշտամունքի մէջ: Ան՝ երբէք բացակայած չէ: Բայց մենք տակաւին հեռու կը փախչինք: Ոչ միայն մենք կը հաւատանք Աստուծոյ, այլեւ կը հաւատանք թէ իւրաքանչիւր մարդ կրնայ ճանչնալ զԱստուծոյ: Ամէն առոնք որ պարկեշտութեամբ և անկեղծութեամբ կը լինուեն, պիտի գտնեն զԱն: Աստուած, այլեւայլ կերպերով և նշաններով մէկանել, զինքը մեծարող հոգիին՝ իր անձը գիտէ յայտնել: Երբ մենք մեղքի և հպարտութեան մէջ իյնանք, Ան կուգայ մեր դարանուող հոգիին մօտիկ, բայց կը մերժուի, — կը մերժուի անուշաղբութեամբ, կամակորութեամբ, ինքնաշաւանդութեամբ և զանցաւորութեամբ: Այն մարդը որ զԱստուծոյ կը մերժէ՝ անմիջապէս, մարմնաբոլ սիրտ մը և յուսահատ նայուածք մը ունի: Ասանց մասին, նպատաւոր և աննպատաւ ամէն ինչ ընելէ յետոյ, կ'եզրականացնենք.

Աստուած չունենալ՝ յոյս չունենալ է:

Աստուած չունենալ՝ հայր չունենալ է:

Աստուած չունենալ՝ տուն չունենալ է:

Աստուած չունենալ՝ երկինք չունենալ է:

Առանց Աստուծոյ՝ առանց Յոյսի. երկուքը իրարու զուգընթաց են: Բայց Աստուած ունենալ, ամէն բան ունենալ է: Սուրբն Պօղոս կ'ըսէ. «Ամէն բան ձերն են. աշխարհ, կեանք, մահ, ներկայ և ապանի իրեր: Բոլորը ձերն են»: Քրիստոս ունենալ՝ ամէն բան ունենալ է. ընտ-

րելագոյնը այս աշխարհի և ընտրելագոյնը հանդերձեալին, ընտրելագոյնը հիւանդութեանց մէջ և ընտրելագոյնը առողջութեան մէջ, ընտրելագոյնը կեանքի մէջ և ընտրելագոյնը մահուան մէջ: Մեծն Ուէպէյ, խոր ճշմարտութիւններ խօսեցաւ, երբ մահուան անկողնոյն մէջ յայտարարեց.

«Բոցոր՝ քանեքուն ընտրելագոյնը՝ այն է Աստուած մեզի հետ ե» (*)

Թարգմ. Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

(1) Սբ. Օւիվըր Լօճ իր «Հուստի կարեւոր մասը համապատասխան է հետքերի» երկին մէջ, կը յիշէ Ֆենելոնի գեղեցիկ և ընտիր խօսքը ուր համապատասխան կը պատմէ կրօնքի ուսուցումը Աստուծոյ գոյութեան մասին: «Ամէն ինչ որ գոյ է, Աստուծոյ անհուն գոյութեան ընկերակցութեամբ միայն գոյ է: Ան ամէնը, որ իմացականութիւն ունի, միայն Անոր վեհագոյն աղբիւրէն բխած ունի, և այն ամէնը որ կը գործէ, միայն Անոր գերազանց գործունէութեան ազդեցութեամբ կը գործէ: Ան է որ ամէն բան կ'ըսէ ամենուն մէջ, Ան ներկայ է մեր կեանքի ամենիւր վայրկեանին. մեր սրտին զարկն է, մեր անգամանքուն շարժումը, մեր աչքերուն լոյսը, մեր հոգւոյն իմացականութիւնը, մեր հոգւոյն հոգիւնը:

ՍԻՆԵԱՑ ԴՊՐՈՑ

Թ. (*)

ՎՐԺԱՆԷՍ ՔԵՐԹՈՂ

Եօթներորդ գարուն սկիզբները կը յիշատակուի Վրթանէս, որ աշակերտն է Սինեաց վարդապետանոցի գլխաւոր զեկաւար Պետրոս եպիսկոպոսի: Իր ուսուցման ետեւէ յետոյ այդ վարդապետանոցին մէջ, կ'երթայ Կաթողիկոսարանի վարժարանը պաշտօնավարելու, և ի վերջոյ կը բարձրանայ մինչև հայրապետական Տեղապահութեան:

Վրթանէս քերթողի անձին սրբութեան և առաքինութեան համար Ուխտանէս եպիսկոպոսի (Ժ. Դար) վկայութիւնները զովեստից չուսյրութիւն մը չեն համարուիր երբեք, վասն զի Անիկա իր բարեմասնութիւններով արժանացաւ կաթող. Տեղապահութեան բարձր պաշտօնին, և մանաւանդ իր հաւատարմութեան պատճառն էր զոր կը քաջէր, երբ Մովսէս Կաթողիկոս վերջին վարկեաններուն Անոր կը յանձնէր եկեղեցական աւանդները:

(*) Ը. յօդուածը տես թիւ 46:

Ըստ Օրբէլեան պատմչի, երեք տարի տեղապահութեան պաշտօնը վարած է Վրթանէս, և ճշգրիտ ժամանակագրութեամբ կը համապատասխանէ այդ միջոցը 604 — 607 տարիներուն, Մովսէսի մահէն մինչև Արրահամ Կաթողիկոսի օծումը, որ տեղի ունեցած է Պարսից Ապրուէզ կոստով արքային տաճար և Եօթներորդ տարին, ըստ Ուխտանէսի, որ է ըսել 590 + 17 = 607 թուին: Վրթանէս իր Ուսուցչին՝ Սինեաց Պետրոս եպիսկոպոսի կապին համաձայն Ազուանից Կաթողիկոս Զաքարիայէն առաւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն, երբ իրեն փոխակիցաւ Սինեաց Աթոռը:

Խնդիր է թէ Վրթանէս քերթող միայն հայրապետական աթոռին տեղապահութիւնը վարեց Մովսէս Կաթողիկոսի մահուանէն վերջը, թէ ոչ Կաթողիկոսին վերջի տարին ուրաւն ալ անոր գործակիցն էր հղած արդէն: Կիրակոսի վկայութեան հայելով Մովսէս երեսուն տարի Կաթողիկոսութիւն կ'ընէ և տեղապահութիւնը Վրթանէսի տարով կը վախճանի. իսկ Զամբանի պատմութեամբ Մովսէս երեսուն տարի կաթողիկոսութիւն ընելէ յետոյ իր ծերութեան ատեն փոխանորդ կը կարգէ Վրթանէսը, և անոր միջոցաւ կը պաշտօնավարէ տաճարէք տարիներ ևս (Զամբ. Գ. Գերբ. Գլ. ԽԲ.):

Ըստ մեզ, Զամբանի տողերն ստուգապատում կ'երևին մէկ կէտով միայն, այն է Վրթանէսի պաշտօնավարութիւնը Կաթողիկոսին կենդանութեանը ատեն վասն զի կը խորհինք թէ Մովսէս Կաթողիկոս պիտի չուզէր իր օրհասական ժամերուն մէջ յանկարծ յանձնել աթոռին պաշտօնութիւնն ա՛յնպիսի անձի մը, որ չէ թէ միայն իրեն դէմ խուլ հակառակութիւն մ'ունէր, այլ նաև ձեռնադրութիւնն իրմէ չէր ստանձնէր Մովսէս անշուշտ ցաւած էր Պետրոսի եպիսկոպոսական համար, որով Սինեաց եպիսկոպոսներն Ազուաններէն պիտի առնէին ձեռնադրութիւն ու միւսումն, ուստի կը կարծենք թէ Կաթողիկոսին ձեռք առնելիք ուրիշ միջոց չկար Սինեցիները սիրաշահելու համար, բայց եթէ զանոնք Կաթողի-

կոտարանին հետ սիրալիր յարաբերութեան մէջ զնեյու կերպեր խորհիլ, և նոյն իսկ Հայ Կաթողիկոսէ ձեռնադրութիւն չառնող Սիւնեցի եպիսկոպոսն իրեն օգնական առնուլ հայրապետանոցի գործերուն մէջ:

Մեր այս կարծեաց հաւանականութեան հրկրորդ ապացոյց մ'ալ ունինք: Վրթանէս քերթողի տեղապահութեան յաջորդող Արքահամ կաթողիկոսի ընտրութեան ատեն Սիւնեաց եպիսկոպոսն է Քրիստափոր, որ և ներկայ է նորընտիր հայրապետին օծման հանդէսին, և Օրբէլեանի պատմութեամբ, Սիւնեաց աթոռին վրայ Վրթանէսի յաջորդ Գրիգորէն վերջը կուգայ, որ է ըսել Վրթանէս իր եպիսկոպոսացած Աթոռին վրայ կը տեսնէ իր յաջորդին յաջորդն եղող Քրիստափորը, երբ Արքահամ կ'ընտրուէր Հայոց Կաթողիկոս:

Ըստ ամենայն հաւանականութեան, ուրեմն, երբ Վրթանէս կանչուեցաւ Մովսէս Կաթողիկոսէն փոխանորդութեան պաշտօնով, Սիւնեաց եպիսկոպոսի նոր ընտրութիւն կոտարուեցաւ յանձին Գրիգորի, որ 15 տարի պաշտօնավարեց, իրեն յաջորդ ունենալով Քրիստափորը, երբ տակաւին ողջ էր Վրթանէս ու կը գտնուէր կաթողիկոսական տեղապահութեան պաշտօնին վրայ: Այս հաշուով Վրթանէսի Սիւնեաց Աթոռէն հրաժարելէն մինչեւ Քրիստափորի ընտրութիւնը 15 տարուան ժամանակամիջոց մը կայ, որուն մէջ Վրթանէս 13 տարի պաշտօնավարեց կաթողիկոսին կենդանութեանն իր փոխանորդ, և 3 տարի ալ անոր մահուանէն յետոյ իբր տեղապահ, ընդ ամէնը 16 տարի: Հետեւապար Քրիստափորն ալ մէկ տարուան եպիսկոպոս էր եղած Սիւնեաց երբ Արքահամ կ'ընտրուէր Հայոց Կաթողիկոս: (*)

Վրթանէս քերթող Սիւնեաց Աթոռին վրայ եղած ատեն Հայաստանեայց Եկեղեց-

ւոյ ուղղափառ վարդապետութիւնն սնուաբար պահելու նախանձախնդրութիւնն ունեցած է: Յովհաննէս Կաթողիկոս մասնաւոր թուղթով մը կը պատուիրէր Սիւնեաց երկրին ամէն կողմը տարածուելու ջանադիր նեստորական սղանդաւորներն իսկոյն հեռացնել երկրէն, և միանգամայն յղած էր Մատթէոս անուն քահանայ մը գործակցելու համար Սիւնեաց եպիսկոպոսին: Վրթանէս՝ իբրեւ ուղղափառ հաւատոյ ախոյեան՝ հալածեց և իր երկրէն յաջողեցաւ վտարել նեստորական ու քաղկեդոնիկ սղանդաւորները, և միեւնոյն ատեն նզովքի տակ դրաւ զանոնք որ պիտի համարձակէին իրենց սահմաններուն մէջ թողուլ այլ մարդ վարդապետութեան հետեւողները:

Քննական տեսութեամբ մօտենալով Վրթանէսի՝ իբր մատենագրի, չենք վարանիր խոստովանելու թէ այնքան մեծ դիրք մը չէ կրցած ունենալ, նոյն իսկ ֆեթրոյ մականունն արժանանալու գրական բաւարար երկասիրութիւն մը չէ թողած. ու կը խորհինք որ թերեւ այդ յարջոյշումը ֆերական կամ դաւախոս իմաստով իմացուած է Վրթանէսի անձին համար, քանի որ ան հաւանական չէ հայրապետանոցի վարժատան մէջ կրթական գործին սատարած ըլլայն ալ: Իր անունով հասած է գրուած մը Յաղագս Պատկերանարսաց վերնագրով. ունի նաեւ եօթն նամակներ, զորս կը կարդանք Ուխտանէսի Պատմութեան մէջ:

Պատկերամարտութիւնն իրեն հեղինակ ունի Լեոն Գ. Իսաւրացի Կայսրը, որ Հրէից ու Մահմետականաց հետ յարաբերութիւն ունենալով, անոնցմէ կրած ազդեցութեան տակ փութաց պատկերամարտ հրովարտակ մը հանել գահը բարձրանալուն պէս: Լեոն Կայսր զահակարած է 716 թուականին. եթէ մէկ տարի վերջն հրամայեց պատկերները վար առնուլ և կործանել, ըսել է ճիշդ 717 ին է Իսաւրացի կայսեր պատկերներու ղէմ մղած պայքարին սկզբնաւորութիւնը, թողունք որ բուն պատկերամարտներու կռիւը կը սկսի 726 ին և կը վերջանայ 842 ին (Hist. Générale հտ. Բ. Պրակ 8): Արդ, քանի որ պատ-

(*) Ըստ ճշտագոյն ժամանակագրութեան Մովսէս ընդ ամէնն 30 տարի կաթողիկոսութիւն ըրած է, 17 տարի առանձինն և 13 տարի Վրթանէսի գործակցութեամբ: Ներսէս Բ. վախճանած է 557 ին, Յովհաննէս մինչև 574 կաթողիկոսութիւն ըրած և Մովսէս 574+30=604, երեք տարի ալ Վրթանէս Տեղապահ 604+3=607, որ ճիշտ թուականն է Աբրահամին ընտրութեան:

կերամարտներն է. դարուն սկսած են երեկ, ինչպէս կ'ըլլայ որ Չ. դարուն վերջերն և եօթներորդին սկիզբներն ապրող անձ մը՝ որպիսին է Վրթանէս քերթող՝ կրնայ գրած ըլլայ ճառ մը Յաղագս Պատկերաւարտաց: Նոսե պատմիչներէն դէիմ մէկն ինչո՞ւ չի յիշեր պատկերամարտներու համար Վրթանէսին գրուած մ'ունենալը:

Ուխտանէս որ իր դործին մէջ երկու առանձին դուխներ նուիրած է Սիւնեաց այս եպիսկոպոսին կեանքն ու գործունէութիւնը գովեստներով նկարագրելու համար, միթէ կրնա՞ր մուծող յիշելու անոր միակ երկասիրութիւնը որ իր նիւթովը մեծ կարեւորութիւն ունէր: Գոնէ Օրբէլեան որ միշտ իր աշխարհի եպիսկոպոսներուն վրայ գովեստից շուայութիւնով կը խօսի, ինչ պատճառաւ պիտի չյիշէր Վրթանէսի կուրսորագոյն մէկ գործը:

Քննական այս թեթեւ ակնարկն իսկ կը բաւէ իր փաստերով կարենալ համոզուելու համար թէ Յաղագս Պատկերաւարտաց գրուածն հաւանաբար է. դարուն կամ աւելի վերջն ապրող անձի մը գործն է, և թերեւս նուիրուած՝ կաթողիկոսական մեծանուն Տեղապահին անուան:

Գարով նամակներուն, համառօտ գըրուածներ են անոնք, որոնցմով չէ կարելի բարձրութիւն մ'ընծայել Վրթանէսի մտաւորական մակարդակին: Այդ եօթը նամակներէն չորսը պատասխաններ են իրեն հաւատարիմ Մովսէս Եպիսկ. Յուրաւայ գրած նամակներուն, և ընդհանրապէս Վրաց Կաթողիկոսի քաղկեդոնական ձգտումներուն պատճառաւ ծագելիք պառակտումներու և ժողովուրդին գայթակղութեան առաջին սունկու միջոցներուն վրայ կը խորհին Վրթանէս և Մովսէս: Մէկ հաւաք չըջաբերական է ուղղուած Յուրաւայ վանքերու երկայնաց, զիւղերու քահանայից և համօրէն ժողովրդեան: Նամակ մ'ալ գրած է Վրաց Կիւրիոն Կաթողիկոսին և իշխաններուն, ցոյց տալով անոնց մարտիլը քաղկեդոնականութեան: Թուղթ մ'ալ ունի առ Պետրոս Եպիսկոպոս, որուն ուղղափառութեանը նկատմամբ դո՞ւ ըլլալը կը յայտնէ և կ'ուզէ որ ուղղութեան բերուի քաղկեդոնականութեան յարող եպիսկոպոս մը:

Վրթանէս քերթողի գրուածներուն մէջ ո՞ճի և բացատրութեանց խորհրդարանութիւններ չկան. ճշտուպէս նամակներ ըլլալու ամէն հանգամանք տնին անոնք, պարզութիւն, յստիութիւն, և հաւանօտութիւն: Նամակներուն մէջ Վրթանէս ունի սա՛ լուսեղը՝ նորոգածեւութիւն, հանդիպողական, փեղեկաւորման, օտարացուցանող, զոռոգաւաստ, մակուկացու հայն: Իսկ ք յայտնի ապացոյցներ կրնան սեպուիլ այն անկումին զոր ունեցաւ հայ իշխան Չ. և է. դասուրուն մէջ, անհաւատալի ճոխութեամբ արագ փայլումէ մը ետք Ե. դարուն:

Վրթանէս Եպիսկոպոսի մահուան վրայ Օրբէլեան միայն կ'ըսէ թէ ճշմարիտ վարդապետութեամբ և առաքինի վարքով 23 տարիներ Սիւնեաց մետրապօլիտութիւնը վարելով վախճանեցաւ: Եթէ ենթադրաբար երեք տարի ապրած համարինք սեղապահութենէն յետոյ, այսինքն մինչև 610 թուականը, 23 տարի ետ երթալով կ'ունենանք $610 - 23 = 587$, որ Վրթանէսի Աղտանից Չաքարիա Կաթողիկոսին ձեռնողութեան թուականն է: Օրբէլեան զանի մինչև ցմահ իբր Սիւնեաց եպիսկոպոս կ'ուզէ նկատել, թէպէս Վրթանէս Կաթողիկոսութեան մէջ կը մնար Տեղապահութեան պաշտօնով և Սիւնեաց Աթոռին վրայ ուրիշներ: Գրիգոր և Քրիստափոր՝ բաղմեր էին:

ԳՆԷԼ Վ. ԳԱԼԷՄԲԵՍՐԵԱՆ

Դասրգիւղ

ՎԱՐՈՒՄՆ ՆԵՄՆԵՐԸ

Կանքիդն աղօս կը պրշպրայ անարիս վերեւ. իրիկունը սեւ պստակ մը բերաւ ինծի, որ կը արիկի դակիոն ճակասս բաճասեղծի. Վերջապսը հծծեց աղիկն փոքին քարեւ:

Ու կը նայիմ լեռան ետին, ուր շուս մնաւ Արեւն ոսկի, իմ երագիս պէս սղաճակի: Կեանքիս արեւն ալ զիս ցատ յաճախ հիւանդ, Սիւ աւսիտիկն այնքաւս մեկ արցունք դաւ:

Անժիկիսը շուսով շուց իր երգն յիսին, Ա՛յ չի շուիր վարուժանը հաւքայնիւրուն, Աստալներու թոյլիւն արժար շուս կ'անկեկին:

Ու կը խորհիմ յաղուած ցոգը լուռ փշտերուն, Կեանքը որ եւ կ'սպրիմ, նման է կանքիդին. Արեւոյ վաղը պիտի յանձնեմ զայն ցուրտ հողին:

ԳՊՐԵՎԱՆԲԵՐ

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Անգլիերէն Պայպըլ անունը կուգայ Լատիներէնի միջոցաւ Յունարէն Վիվիս բառէն, որ կը նշանակէ Գիրք: Այս, Ար. Գիրքը գիրքերու Գիրքն է, բայց աւելի յարմար պիտի ըլլար զայն կոչել «Առաւելածային Մատենադարանը» որովհետեւ անոր մէջ կան 66 գիրքեր, գրական բազմաստիճանի սեւերէ: Անոր մէջ կան հին զրոյցներ, որոնք Արարչագործութեան եղբուքիւնները պարզ ձեւերով կը սորվեցնեն, ու հիմա մենք այդ իրողութեանց վրայ ընդարձակ տեղեկութիւններ կ'առնենք գիտութեան միջոցաւ: Հին կան պատմութեան գիրքեր, ինչպէս Դատաւորաց, Թաղաւորաց և Մնացորդաց գիրքերը, որոնց բովանդակութեան ընդհանուր գիծերը կը հաստատուն ճգնադատի և Ասորեստանի մէջ կատարուած պեղումներով: Կայ նաև այն հիմնադիր երգարանը զոր Սաղմոս կ'անուանենք, և զոր պէտք է միշտ ոտանադրի ձեւով գրել, ինչպէս եղած է Սրբազրիալ Օրինակին մէջ: ՃԺԹ. Սաղմոսը հրաշալիք մըն է ինքնին, որ կը պարունակէ 22 հատուածներ, իւրաքանչիւր հատուած ութական սուն, և իւրաքանչիւր հատուածին վրան զրուած է երրայական այբուբենին 22 գիրերէն մէկը: Այդ Սաղմոսին 176 տուներէն իւրաքանչիւրը կը լրովանդակէ գոնէ քանի մը բառեր, որոնք տատուածային ճշմարտութիւնը կը բացատրեն՝ իրրեւ խօսք, օրէնք, դատաստան, պատուիրան և այլն: Ամէն ազգ իր առական ձեւը ասացուածքներուն հաւաքածոները ունի, ու երբայեցիները իրենցը Սողոմոնի անունին սակ ամփոփած են, ու ծանօթ է մեզ իրրեւ Առաջաց Գիրքը: Յայտարարութիւններ, գուշակութիւններ ու մարգարէական ներշնչումներ կան այն Գիրքերուն մէջ, որոնք ծանօթ են մեզ իրրեւ աւագ և կրտսեր մարգարէից Գիրքեր: Յորայ գիրքը կայ իրրեւ հիմնադիր բանաստեղծութիւն: Անոր անծանօթ հեղինակը կրնայ դատաւորուիլ համաշխարհային գրականութեան չորս մեծ գէմքերուն՝ Հոմերոսի, Տանդէի, Շէքսպիրի և Կէօթէի քով:

Հին Կտակարանի մէջ կան նաև Օրինաց Գիրքեր. Դեւապետ, Թուոյ և Երկրորդ Օրինաց գիրքերը Եզրասէ խմբագրուեցան անոր Երուսաղէմ դարձին, ասկէ 2500 տարիներ առաջ:

Մաղաքիայի և Մատթէոսի մէջ 400 տարուան լայն մը կայ: Ազգային խոնարհեցումի և տառապանքներու այդ չիջանին մեծ Գիրքեր գրուած են և մեծ հերոսներ ներկայացուած. բայց Տրեմաէի Ժողովը, որ ասկէ 1500 տարի առաջ Կանոնական Գիրքերը որոշեց, Անկանոն գիրքերը վերցուց, թէեւ մինչեւ վերջին դարուն մէջ տեղերը լայն տեսած Ար. Գիրքի օրինակներուն մէջ կը դրուէին, մինչեւ որ բոլորովին հանուեցաւ Ճորճ Ե. Կողմէ՝ Յունիսին իր թագադրութեան տախտով ցրուած օրինակէն: Անկանոն գիրքերը ազէկ են, բայց մեր Ար. Գիրքը կազմող Գիրքերուն չափանիշին չեն հաւասարիր:

Նոր Կտակարանի մէջ Աւետարաններ կոչուած չորս երկար հատուածներ ունինք, որոնք Նազուրեցի Յիսուսի կեանքին ղէպքերը կը պատմեն ու անոր խօսքերը կը գրեն: Գործք Առաքելոցը, առաքելական ճամբարդութիւններու մասին գրուած անդրանիկ հատորն է: Յետոյ կուգան Կարգ մը թուղթեր (նամակներ) որոնք Եկեղեցիներու և անհատներու գրուած են՝ այնպիսի անձերու կողմէ որ անոնց այցելած են: Եւ վերջապէս «Յայտնութիւն» անունով ճանչցուած գիրքին մէջ արեղարդ Յովհաննէս Առաքելայի մէկ տեսիլքին նկարագրութիւնը ունինք:

1604ին Ճէյմս Ա. գահ բարձրացաւ ու գրեթէ պատահմամբ ձեռնարկեց գործի մը որ ընդհանուր հաւանութեան արժանացաւ: 1604ի Յունիսին 54 ուսեայ մարդիկ որոշեց, որ Ս. Գիրքի բոլոր պատրաստ օրինակները բաղդատեն ու նոր մը պատրաստեն: Անոնք վեց խումբերու բաժնուեցան, երկուքական նստելով Ուէսթմինսթըրի, Օքսֆորտի և Իէյմպրիֆի մէջ: Անոնցմէ ոմանց վճարում կ'ըլլար, ոմանք պարտոյ եղած տառնին կը շահէին իրենց ապրուստը: Այս կարող մարդիկը 1611ին

դատարանական Կառնակի (Authorised Version) կոչուած օրինակը, որ տարբեր գիրքերով, մեծադիր ու փոքրագիր տպուեցաւ: Առանց մէջ բազմաթիւ, մինչեւ 2000 տպագրական վրիպակներ կային: 1631ին տրուած օրինակի մը մէջ «մի չնար»ին մին մուցուած էր: Այս տպագրութիւնը «չար Սր. Գիրքը» անուամբ ծանօթ է, և տպագրուէն 300 անգլ. տիկ տուգանք առնուեցաւ: 270 տարի այս Կառնակի օրինակը անմայիկ հանդիսացաւ, մինչեւ որ 1831ին Սրբագրուած Օրինակը լոյս տեսաւ:

Երեք կէտեր ուշադրութեան արժանի են. — Լեզուն աղիկ ևնդղիներէն է: Սքոթ իր Ուէյվըրի վէպեր անուն վէպերուն մէջ 8000 բառ գործածեց, Տիքընզ իր գիրքերուն մէջ՝ 11000, Շէյքսպիր՝ 15000: Ս. Գիրքի մէջ 6000 բառեր կան, որոնց 97 առ հարիւրը զուտ Անգլիերէն են: Միկտոնի «Դրախտ Կորուսեալ» երկին մէջ գործածուած բառերուն 81 առ հարիւրը, Թէնիսընի «Լին Մէմորիամ»ին՝ 89 առ հարիւրը զուտ անգլիերէն են, և Սր. Գիրքին այդ 6000 բառերէն 250ը հիմա սովորաբար գործածութեան մէջ են: Մեր (Անգլ.) լեզուն գրեթէ 300 տարի առաջուան լեզուն է: Փրոֆ. Սէյնթալըրի կը յայտարարէ թէ Սամարացի կնոջ պատմութիւնը գրական գոհար մըն է: Անոր մէջ գործածուած 200 բառերուն 162ը միավանկ են ու յօրին ալ, բացի հինգէն, մաքուր Անգլիերէն են: (*)

Ան ազատութեան ամրոց մըն է: Նկատուելի է ան առէք Սր. Գիրքին գործածուած երկրները, ու պիտի տեսնէք թէ այն ազգերը որ զայն կը գործածեն, ինչպէս Գերմանիա, Հոլանտա, Շուէտ և Մեծ Բրիտանիա, բնիկացիին, կրօնական և քաղաքական ազատութեան օրօրանդ եղած են: Բայց Ապսինիոյ, Փորթուգալի, Իսպ-

լիոյ և Ռուսիոյ պէս ազգեր, ուր Սր. Գիրքը քիչ ծանօթ է, բռնապետութեան և աւերարդապաշտութեանց բոյն դարձած են: Ամէն տեղ Սր. Գիրքի մուտքը ազատութեան կը բերէ, և տիեզերական եղբայրութեան արդի շարժումը յառաջ պիտի չգործէ չլայն այն հաւասարութեան ու եղբայրութեան ուսուցումները, զորս սորվեցոյց Նաղարեցի Մեծ Կարգապետը:

Ան մարդկային ազգին միացուցիցն է: Սր. Գիրքը 400 է աւելի լեզուներու և զաւառարարքաւորութեամբ թարգմանուած է: Շուրջն ու երկարականութիւնը, թղթատարն ու հետադրութիւնը այս մարտնչին բոլոր հեռաւորութիւններուն վրայ կամարջ ձգած են: Հաւատարմութեամբ, թերեւս ո՛ր աւելի ազդեցութիւն ունեցած է Սր. Գիրքի գործածութիւնը ազգերը իրարու մօտեցնելու տեսակէտով, ու այդ կերպով բոլոր մարդիկը Աստուծոյ Մեծ Բնաստիքին անդամները հանդիսացնելով:

(Թարգմ. Անգլ. է)

(The Presbyterian)

ԿՐՈՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

Հայ ազգի պատմական անցեալը յայց է տալիս, որ նա քրիստոնէական պարզ, ճշմարիտ և փրկարար կրօնն ընդգրկելուց յետոյ, սկսեց յառաջդիմութեան ուղին մէջ մտնել. նրա բարոյական և մատուր մակարդակը այն աստիճան բարձրացաւ, որ ասանձին տեղ զբաղեց իւր հարեւան ազգութեանց մէջ. պատեց զպրոցական, կրօնական և այլ բարեգործական հաստատութեան ցանցերով իւր բովանդակ երկիրը, օրոնցից մի մասը, վանքեր և եկեղեցիներ, դեռ մինչև այսօր էլ մանա և աւերիչ ձեռքերից զերծ մնացած՝ աչքի են ընկնում իրենց հոյակապ շինածքով և գեղեցիկ ճարտարապետութեամբ: Հայը վանքերի և եկեղեցիների համար չինայեց իւր վերջին կոպէկն անգամ: Նա նոյն իսկ զհաւերեց իւր կեանքը նրանց պահպանման համար: Նա կրօնացի հարստութիւն, իշխանութիւն, փառք բայց չուզեց զրկել այդ կրթական-կրօնական վեհ հաստատութիւններից. առ սրս պինդ, ամուր կառ-

(*) Մեր գրաբար Սր. Գիրքն ալ լեզուաբանական-քառագնեական աշակերտ վերլուծումէ մը անցընելէ շատ հետաքրքրական ու շահեկան աղբիւր՝ պիտի ծառայէ հաւանաբար:

չած էր, զի իր զոյութեան հիմքն էր կազմում:

Ի՞նչ էր ներկայացնում հեթանոս Հայը և ի՞նչ քրիստոնեայ Հայը: Դա այնքան բացարձակ է որ հարկ չկայ ճառել, երևան բերել նոր կրօնի մեծամեծ առաւելութիւնները:

Սակայն ներկայ 20րդ դարում հայ ինտելիգենցիայի մի սուտար մասը, չգիտեմ ի՞նչ հիմունքներով, մխտում է կրօնի և և կեղեցւոյ նշանակութիւնը, կոչումը, և նոյն իսկ վնասակար է համարում նրա գոյութիւնը: Ո՞ր լուսաւորւած ազգին է հետեւում նա, որից է օրինակ վերցնում: Միթէ՞ կուլտուրական ազգերը չեն պարտիր քրիստոնէական կրօնին՝ իրենց հսկայաքայլ առաջադիմութիւնը: Ի՞նչ վնաս է տւել մեզ կրօնն ու եկեղեցին, միթէ՞ արանք թոյլատրում են գործել այնպիսի բաներ, որ ներքին չէ երբէք, գտնւել այնպիսի ընթացքի մէջ որ դատապարտելի է և խորշկի:

Եւ այդ նոր երկատարողութիւնը, չնորհիւ իր գիրքի և ստանձնած պաշտօնի, ազգում է հասարակութեան ամեն խաւերի վրայ, խախտում է նրա հաւատքը, զայնազգեցնում նրան, հեռացնում այն նեցուկից, եկեղեցուց, որից չկարացին պոկել այլ և այլ բարբարոս ազգերի գործ դրած սոսկալի խժոժութիւնք, խոշտանգանք, որածութիւնք եւայլն: Մեր մատաղ սերունդը, ազգի այդ ապաղայ յոյները, որոնք յանձնւած են այդ «ազատամիտ» և «լուսամիտ» համարւած պարոնների խնամոց, կարծես աշխատում են գերազանցել իրենց ուսուցիչներից իրենց մոլորութեամբ, արհամարհում են իրենց հայրենի նւիրական սրբավայրը... որը կրթել և դաստիարակել է չափ սերունդներ, կատարել է իր բարձր գերը Հային ճակատագրին վրայ, և ընդ այլ զօրութոր ազգս ձուլումից զերծ է պահել:

Մի քանի փաստերով միայն բաւականում ենք ապացուցանել մեր առածների ճշմարտութիւնը: — Ի՞նչ պատահեց Լեհաստանի Հայոց, երբ բռնի կաթոլիկացան: Ինչ են ներկայացնում այսօր Հնդկաստանի

Հայերը ո՞րքան զուտ հայ է մնացել անդ, իսկ ի՞նչ է վիճակուած այսօր ուսական բուն երկրում բնակւող մերազնէից շատերին...:

Մեր չակերտաւոր ազատամիտները չափ անգամ պնդում են թէ եկեղեցին իր գերը կատարելուց դատարել է այլ ևս: Տեսնենք դա ո՞րքան ճշմարիտ է:

Սրանից մի քանի տարի առաջ Ռուս կառավարութիւնը փակեց մեր ուսումնականները, բացի հինգ միջնակարգներից: Ի՞նչ արեց հայ-ազգը հանդէպ այս սանձգութեան. — Նա միայն խուլ լուղւք բարձեց: Իսկ երբ իրիմեան Հայրիկի օրով ձեռք միեց եկեղեցուն, ամբողջ Հայութիւնը ցնցեց, զայրոյթի բողբոջներ արձակուեցան ամեն կողմից, ցոյցեր կազմակերպւեցան և բազմաթիւ Հայեր իրենց տրեւումը ներկեցին բազմաչարչար Հայ-եկեղեցին մի անգամ ևս...:

Մեր «լուսաւորեալ»ները, գիւտք, չեն ուրանում Քրիստոսի մեծ մարդու յէր և վնճ զաղափարի տէր լինելը, անշուշտ նրա կեանքն ու վարչապետութիւնը ուսումնասիրելով: Եւ երբ նոքա խոստովանում են այդ բանը և իրանցից էլ կան ուսուցիչներ, ինչո՞ւ ուրեմն չեն աւանդում աշակերաններին Աւետարանը, ինչո՞ւ վտարել են չափ դպրոցներից ճշմարիտ Քարոզչի փեսա խօսքերը: Եւ ուսանող մանկան, զուրկ կրօնի դատարանակութիւնից, դամ քան զգամ փչանում և դիմում է դէպի բարոյական անկում...:

Սակայն մենք մտած ենք և ամերկբայ որ մեր նոր սերնդականների կողմից այս յոռի ընթացքը չուսով կանդ կ'աւանդէ իր զգան իրանց մեծ սխալը. կը փարին սկրայթար եկեղեցւոյն և նրա զոյութիւնը անհրաժեշտ կը համարին, իրբւե միակ միջոց ազգի պահպանման և բարոյականի բարձրացման:

Իսկ դու, եկեղեցի Հայաստանեայց, չափ անգամներ պատած է ի քեզ մեայլ և սե տմպեր, ենթարկւած ես անողորմ հարւածների, այնուամենայնիւ չարունակել ևս քո գոյութիւնը արիարար, երբէք չընկճւելով:

Մօտ է և կը գայ շատ չուտ այն բերկ-
առութիւթ օրը, երբ Հայ Եկեղեցւոյ մուայ հո-
րիզոնից կը ցրւին սև ու մութ ամպեր .
և նորից Հայ Եկեղեցւոյ փրկարար լոյսը
կ'արծաղէ իւր ոսկեփայլ ճաճանջներ . այն
մամանակ այժման «չակերտաւոր» գի-
տուններ կորագլուխ պիտի փութան մանե-
լու Հայ Եկեղեցւոյ դրօշակի տակ, այնտեղ
գտնելու իրանց հանգիստ ու փրկութիւն :
Թաւրիգ ԱՅՐԱՀԱՄ ԹԱԼՕԵԱՆ

ՔԱՀԱՆԱՆ ԻՐ ԵՐԿՐԻՆ

ԵՒ ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«Տաճար» կրօնաթերթը, զոր լոյս տե-
սած օրէն ի վեր անյաղ ցանկութիւնով
կարդալու բարեբաղդութիւնը ունեցեր եմ
և ունիմ, իր ամբողջ էութեամբն ու լայն-
օրէն խմատով վկայ կը հանդիսանայ Հայ Ս .
Եկեղեցւոյ հիմնադիր Յիսուսի, որդւոյն
Աստուծոյ բարձր, անարատ և ներող ոգի-
ին, առ որ կը ծնրադրէ ճշմարիտ սիրով
ստորորոտած հաւատաւոր Հայը : Հոն ակ-
ներե կը ցուցուի ձեր ու բոլոր թերթիկ
դարձակցողներու անխնջ աշխատութիւնը,
որոց միակ նպատակն է Եկեղեցիէն ու-
ծացողները, որոց մէջ տակաւին ծած-
կուած կայ Կրօնի Սէրը տակայծեալ՝ հրա-
հրել, ու Հայ Կրօնի պաշտելութիւնները
քաղցրացնել այնպիսեաց, և զոյգ ընդ
նմին բարձրացնել Հայ Եկեղեցականին
գիրքը :

Գաւառացիին, ըլլայ քաղաքացի, ըլլայ
գիւղացի, եկեղեցիէն ուծանալուն պատ-
ճառները չա՛տ ու չա՛տ են :

Ի հետեւին բռնակարութեան երկաթէ
լուծին տակ տարիներէ ի վեր արիւնաքամ
ըլլաին, ալանը թալանը, զուլումն ու
զրկանքը, ահն ու սարսափը, մահն ու
արհաւիրքը . իսկ ի ներկայումս գիւղատըն-
տեաւական տագնապը, նիւթականին խիստ
անձկութիւնը, պարտքերու վճարումներու
չարաչար կիրառութիւնները, որոնց պատ-
ճառաւ յալամայս անխնամ ու երեսի վրայ
մնացին եկեղեցիները, մանաւանդ եկեղե-
ցականները, որոնք նոյնպէս ծնած են չար-
քաշ գաւառացիին կողքէն ու ծոցէն :

Ստոյգ է թէ գաւառացի քահանայ
եղբայրներուն մեծ մասին վիճակի անձկու-
թիւնը աւելի ինկած է քան իրենց հօտին .
նոցա սրտի մարմոքը, իբրեւ հոգեւորական,
աւելի խորաթափանց է քան ժողովրդեան,
ուստի և նոքա իբրեւ մարդ չկարենալով
հանդուրժել կեանքը սրկող պայմաննե-
րուն, լքեցին իրենց փոքրիկ հօտը, ժողո-
վուրդը, և ցուպ ի ձեռին հասան մինչև
Պոլիս, Իզմիր, Եգիպտոս, Պուլկարիա և
մինչև Ամերիկա, ու ահա փակուեցան
եկեղեցիները մէկ քանի աղօթասէրներու
այ հանդէպ : Ու Ազգ . Պատրիարքարանը,
Կեդր . Կրօն . Վարչութիւնը անտարբեր կը
մնայ տակաւին խորհելու համար հովուա-
դուրկ հօտին պէտքն ու պահանջը, և քա-
հանայավայել համեստ ապրուստի մը միակ
միջոցը տարագիր հովուին, որ ցաւ է ինձ
ըսել, օտարութեան մէջ աւելի ստորնայան,
աւելի ընչաքաղցներ դարձան քան որ էին
ստոյգ թշուառներ, ու եղան այս կամ այն
քաղաքի աւագերէցին կամ քտորդասաց
վարդապետին քմահաճոյքին ծառան ու
խնկանուէրը :

Բարեմիտ է գաւառացին . թշուառու-
թեանց հազար և մէկ աղէտից մէջ խորա-
սուզուած է, բայց հպարտ, որ թողաւորեց
մեկուսանալ իր տառապեալ ժամասաց քա-
հանային իր մօտէն, իր սեփական եկեղե-
ցիէն, ենթադրելով թէ իր վրայ ծանրա-
ցած թշուառութիւններէն թշուառի մը և
թշուառացեալ ընտանիքի մը հոգատարու-
թենէն գէթ կ'աղատի պահ մը, վերաթող-
լով հոգեւոր մասակարարութեան մասը
բարձրագոյն հոգեւոր իշխանութեան անօ-
րինման :

Լիայոյս ենք թէ Ազգ . Պատրիարքա-
րանը, Նոպասից Յանձնաժողովը, նոյնպէս
և Բարեգործականը անշուշտ բարեմը-
սութիւնը պիտի ունենան օտարութեան
հովին առջև այս կամ այն կողմ տատանող
վարկաբեկ եկեղեցականին (քահանայ) աղի-
ողորմ վիճակը իր տեղւոյն վրայ բարու-
քելու, որոշելով ճիշդն գուժար մը ամաս-
թուակ, իր տեղւոյն պէտքին ու պահան-
ջին համեմատ . յենդով վիճակային առաջ-
նորդութեանց խղճի վիշտաբխներուն . երբ

մանաւանդ սահմանուած են օգնելու, ստարելու խեղճին ու առաւելեալին, պանդուխտին ու իրաւամերժին. և կարծեմ այսու միայն վերոյիշեալ բարենպաստակ հաստատութիւնները իրենց սկզբունքին մէջ, իրենց ձեռնարկութիւններուն մէջ որդիւնաւոր ու զործնական դաս մը տուած կ'ըլլան ի փրկութիւն ընչաքաղցութեան տարազիր քահանային, և ի շինութիւն հովուադուրկ չուսու Հօտին Քրիստոսի:

Տրապիզոն

ՅՈՒՍԻԿ ՔԼ. ԱՇՃԵԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՐ

Երաժշտական Յանձնաժողովը, երկու երեք ամիսէ ի վեր կազմուած, յուս ու մունջ յառաջ կը տանի իր աշխատութիւնները: Մէկ քանի նիստեր նուիրեց պատրաստելու համար իր ծրագիր-կանոնադիրը, որ նպատակ ունի՝

Ա. — Բարեկարգել Հայ եկեղեցւոյ տնտեսական ընդունած երգեցողութիւնները:

Բ. Պաշտպանել երաժիշտ ուսուցիչներու իրաւունքը եւ հսկել անոնց պատշաճ օգտագործումը:

Գ. Պատշաճել դպրաց համար երաժշտական ձայնագրեալ դասագիրքեր, ինչպէս եւ երգեցիկ մանկանց վարժարանի համար դասագիրքեր:

Դ. Բնկել Կրօն. Ժողովոյ կողմէ դրկուած եւ ներկայացուած երաժշտական գործեր:

Այս հիմնական նպատակներու իրագործման համար ձեռք առնուելիք միջոցները ծրագրուած են կանոնադրին մէջ որ վաւերացուած է Կրօն. Ժողովէն և զոր պիտի հրատարակենք յառաջիկայ թրջումը: Յանձնաժողովը սկսած է արդէն գործի, նամակներ ուղղուած են Թաղ. Խորհրդոց և աւագերէցներուն, որպէս զի տեղեկագրեն թէ իրենց եկեղեցին կազմակերպեալ գաղաց դաս ունի: Քանի՞ հոգի են, ունին վկայեալ երաժիշտ դաստասաններ: Այս պահուս Յանձնաժողովոյ գրասեղանին վրայ կը գտնուի Եկեղեցւոյ պատարագի օրարողութեան միաձայնը, բարեփոխուած Գր. Մէհաէրեան էֆ. է, որուն նկատմամբ Յանձնաժողովոյ անդամք իրենց կարծիքը պիտի յայտնեն, ի վեր-

ջոյ սպազբութեան յանձնուելով ամէն եկեղեցւոյ մէջ պարտաւորիչ դարձնելու համար: Տպագրութեան գործին համար ալ միջոցներ ձեռք կ'առնուին, բանակցութիւններ կ'ըլլան ձուլիչ Ծերունեան էֆ. ի հետ, որ զեղեցիկ կերպով պատրաստած ունի հայկական ձայնախիշերու մայրերը: Տպագրութեան միջոցներուն համար կը խորհուի եկեղեցասէր անձնաւորութեանց օժանդակութեան դիմել: Մտքի ենք որ սոյն յանձնաժողովը կարենայ անվատ յառաջ տանի իր գործը, ջանքերու համար մէկ քանի ատանեակ տարիներէ ի վեր կազմուած և առանց չօգտիւն արդիւնքի լուծուած իր նախորդներուն: Աւելցնենք թէ Լիւան էֆ. Չիլիկիւրեան վերջնապէս հրաժարած ըլլալով, անդամակցութեան կոչուած է ծանօթ ձայնագրագէտ Լիւան էֆ. Խանճեան:

ՄԱՄԼՈՅ ԱՐՁԱԳԱՆԳ

ՎՏԱՆԴԸ՝ ԱՏՈՆՈՅԻ ՄԷՋ

Ատանայի վայրագ, կրօնամոլ խաւժանի մը սուրին ու կրտիկն և ահաւոր կատարածին ենթարկուող այդ քաղաքին հարւածեալ, տաղնապեալ ժողովուրդը այսօր նոր և գուցէ իր ենթարկուածէն շատ աւելի ահաւոր վտանգի մը ենթարկուած ըլլող կը գուժէ Բանկիւմա. որուն երկու կարող թղթակիցները՝ Տրդ. Ա. Ս. Նազգաշեան և Պատ. Սիւսի Մանուկեան՝ վտանգի ազդակը կը բարձրացնեն: Տրդ. Նազգաշեան «Անձայն զոհեալ» խորագրով յոգուածի մը մէջ կը մտնունչէ քաղաքին մէջ օժթարկի քիւրիւրան կոչուած աչքի հիւանդութեան ծուարումը, որ հողիւ մէկ քանի օրուան մէջ բացարձակ կուրութեան կը մասնէ ենթակաները: Տաքաբը կ'աւելցնէ թէ այս հիւանդութիւնը հետեւանք է ջերմամիզութեան ախտին միջբրտնիւրէն աչքը վարակուելուն, և այդ հիւանդութեան ալ կեդրոնն է տեղւոյն Թաղ. չրզան թաղը, ուր քաղաքին կեդրոնը գտնուելուն և ամէնէն պատուաւոր մէկ կէտը ըլլալուն հակառակ, — մէկ քանի հարիւր

անպատիւ, սնրարայական կիներ հաստատուած են: «Մի ժողովրդեան հայրն ու պաշապանը հանդիսացող անձեր, Բաղաքապետ, Իմամ, Առաջնորդ, Պատուելի, Բահանայ, Մրթրան, միացէ՛ք, ձեռք ձեռքի տուէ՛ք, ամէն ճիգ թափեցէ՛ք, և հրդեհի ու կոտորածի տհաւոր աղէտէն մաղապուր ազատուող ժողովուրդը ազատեցէ՛ք ըստ քայց աւելի՛ տհաւոր կոտորածի մը տւերներէն, աւելի՛ վճռական ու տւական քանդուածի մը արհաւիրքներէն. մի՛ թողուք որ այդ անթիկալ տեղւոյն վրայ նորանոր արարթմաններ կառուցուելով հանրատուներ հաստատուին. և զտուեալն ալ փցուցէ՛ք, ոչնչացուցէ՛ք»:

Միւս կողմէ Պատ. Սիսակ Մանուկեան կը սլարդէ այդ անպատիւ կիներուն սրինում թարայական աւերածին ընդարձակութիւնը: «Ներկաթուղիի շինութեան համար եկող Գերման և Իտալացիներ՝ առաջնորդները եղան գինեատուներու, զբօսարաններու և հանրատուներու բաղմանալուն: Պահրի փաշա, քաղաքին գինեատուներուն թիւը 14էն 40ի բարձրացնել հալիւ հաճած էր՝ կարգ մը օտարականներու յանձնարարութեամբ: Աղատութեան հռչակումէն ետքը, մինչև կոտորածի օրերը 70ի բարձրացուցող թիւը, և չիմա 300ը անցած են պաշտօնապէս ճանչցուած գինեատուները: ... Հանրատուները, կառավարութենէն պաշտօնապէս ճանչցուած, 120ի կը հասնին, և անոր գրեթէ կրկնապատիւր՝ զեռ չճանչցուածները:»

Իրապէս ահաւոր վտանգ մըն է որ մասնանիշ կ'ըլլայ այս կերպով, և որուն զո՞հ կ'երթան ոչ միայն չափահասներ, այլ ևս 12—14 տարեկան պատանիներ:

Պատ. Սիսակ Մանուկեան, խնդրոյն նիւթական կողմն ալ հաշուի առնելով, տարեկան 2—3 միլիոն ֆր. փնտս մը մատնանիշ կ'ընէ, ինչ որ ահագին գումար մ'է ժողովուրդին ծայր տոտիճան աղքատութեան մէջ: Բայց նիւթականէն չստ աւելի վեր, կը յուզէ զմեզ բարոյական այն սոսկալի վատասերումը, որուն կ'ենթարկուին մեր աղջակիցները, մասնաւորապէս երիտասարդները, որոնք աղգին ապագայի յայր կը կազմեն:

Զերմապէս կը միացնենք մեր ձայնը՝ արձակուած սրտայոյզ կոչին, և կը հրաւիրենք Աստանայի հոգեւորական և աշխարհական վարիչները, մտաւորականութիւնը և պաշտօնական թէ անպաշտօն գործիչները՝ կարելի ամէն միջոցներով և բոլոր ուժով կուրի այս ահաւոր վտանգին դէմ, որ աղգերը փճացնող, և երեկարական արագութեամբ կորուստի վիճը գլորող մեծազոյն աղէտն է:

*
* *

Ամերիկացիները և կարող պատգամաւորի ընտրութիւնը

Ամերիկահայոց Ազգ. ժողովը, հաստատելով տեղւոյն Կեդր. Վարչութեան այն որոշումը՝ որով Պօղոս Վ. Գաֆթանեանը հրաժարած կը նկատէր Առաջն. Տեղապահութենէ, նոր ընտրութիւն կատարել և Առաջն. Տեղապահութեան կոչել է Տ. Պօղոս Վ. Շահնապարեան: Այս որոշումը տուած է. նկատի առնելով էջմիածնի Ս. Աթոռին մերժումը՝ Տ. Մուշեղ եպ. ի աւելապահութեան վաւերացման մասին: Եւ ինչպէս ծանուցած ենք արդէն, Ազգ. ժողովը Ամերիկահայոց Կաթող. աշխարհական պատգամաւոր ընտրած է Տիար Մաղաք Պէրպէրեան, եկեղեցական պատգամաւոր նշանակելով էջմիածնի Կաթող. տեղակալ Տ. Գէորգ Արքեպ. Սուրենեան:

Վերջին շաբթուն ստացուած Ամերիկահայ թերթերէ կը տեղեկանանք սոսկայն թէ Ուոլքրի մէջ գումարուած Ազգ. ժողովէն անջատարար, Բրօքլինգթոն մէջ ևս Պատգամաւորական ժողով գումարուած է Առաջն. փոխանորդ Տ. Պօղոս Վրդ. Գաֆթանեանի նախագահութեամբ, և մասնակցութեամբ ութ թեմեր ներկայացնող 33 ձայներու: Այս ժողովին առաջին գործն եղած է հաստատել թէ Տ. Պօղոս Վրդ. Գաֆթանեան Մայր Աթոռէն հաստատուած օրինաւոր Առաջն. Փոխանորդն է Ամերիկահայ վիճակին, քանի որ անոր տուած կրկնակի հրաժարականներուն հակառակ, Սինօղը պաշտօնական գրութիւններով և հեռագրերով զանի կը ճանչնայ առաջն. փոխանորդ: Յետոյ ժողովը զաղանի քուէարկութեամբ Ամերիկահայոց Կաթող.

այն . պատգամաւոր ընտրած է Տիար Համարձում Ամպրեռեան , որ պիտի ընկերանայ ի պաշտօնէ եկեղց . պատգամաւոր Տ . Պօղոս Վրդ . Գաֆթանեանի : Այս վերջնոյն բացակայութեան միջոցին , Առաջն . գործերը պիտի վարէ առժամաբար Ուս . դերի հովիւ Տ . Մատթէոս Քհ . Մանիկեան : Այս որոշումները հաստատուած են , Սինդիկէն և Կաթող . տեղակալ Սուրէնեանց Արքեպ . քն Գաֆթանեան վ . ի հասցէին յրկուսն կրկին հեռագրերով :

«Գաւաթ մը ջուրի մէջ փաթորիկ»ը կը շարունակուի ուրեմն . երկու ժողովներ դէմ առ դէմ կը գտնուին՝ անձի մը կամ երկու անձի շուրջ : Եւ մենք , հեռուէն դիտողներս , բացարձակապէս չեզոք , տիրութեամբ կը տեսնենք Ամերիկահայ մեր եղբայրները երկու կուսակցութեան բաժնուած : Տիրուր է այս : Մենք չենք ուզեր մանրամասնութեանց մէջ մտնել , և ի վիճակի չենք վճռական որոշում տալու թէ երկու ժողովներէն ո՞րը իրաւունք ունի . Ուսգըրբնը , թէ Բրովիտէնսնը : Մենք սա գիտենք որ Ամերիկայի մեր պատուական ազգակիցները , որոնք գիտեն մէկ սիրտ մէկ հոգի ըլլալ ազգին ցաւերուն ամօքման , և անոր նիւթական ու բարոյական վերականգնումի ազնիւ գործին մէջ , հիմա պառակտուած վիճակ մը կը ներկայացնեն առաջն . ընտրութեան բաղդատմամբ երկրորդական խնդրոյ մը մէջ , որ լիայոյս ենք թէ իր գոհացուցիչ յաջողութեամբ պիտի կրնայ գտնել Կաթող . ընտրութենէն ետքը :

Կոչնակ , բացարձակապէս չեզոք թերթ մը , որմէ վերայիչեալ տեղեկութիւնները կը քաղենք , իր գրութիւնը կը վերջացնէ սետեւեալ ուշադրու և շատ արդարացի տողերով :

«Ամէն ողջամիտ Հայ բնականաբար շատ պիտի ցաւի որ Ամերիկահայ գաղութին նման պատուական ժողովուրդի մը մէջ ոչոքիս անտարբէր ձեւերով ձեռնարկներ կը պատահին տղայամիտ պոյքարներու երեսէն , նոյն իսկ այսչափ նուիրական , հանգամանք ունեցող ընտրութեան մը պահուն Առանց մտնելու իրաւասութեան հարցի ընծութեան , ինչ որ անօգուտ ժամանակաւնութիւն պիտի ըլլար այլեւս , մենք կ'ուզէինք թելադրել

թէ՛ երես . ժողովին , և թէ՛ ներկայացուցչական ժողովին , որ նուիրական ընտրութեան մը այս վտեմ պարագային զանց տանեն երկրորդական նկատումներ , և մոռնալով ընտրական պոյքարին առթած անտարբէր գաղափարներն , իբր օրինաւոր ընդունին Սինդիկէ հրահանգը , մտղթելով որ յառաջիկայ ընտրութեան մէջ Ամերիկահայերը ներկայացնելու պատասխանատու պաշտօնին մէջ խղճահարութեամբ և անկողմնակալութեամբ վարուին գացող պատգամաւորները , ո՞ր կողմէն ալ որ ընտրուած են անոնք , և իրենց քուէն կեդրոնացնեն ամէնէն արժանաւոր Կաթողիկոսցուն վրայ » :

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՆՈՐԱՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԷԸ

Ազգին ողջամիտ դատակարարը , չեզոք և կուսակցական նեղմիտ հայրենիէ վերամէն կարգի ազգայիններ մեծ գոհունակութեամբ լսեցին Ազգային ժողովին վերջին նիստին քուէարկութեան արդիւնք , որով Թուրքիոյ Հայոց պատրիարքութեան կը կոչուի Ամեն . Տ . ՅՈՒՆՆԵՍՍ Ս . ԱՐՔԵՊ . ԱՐՇԱՐՈՒՆԻ : Հանրային օգուտը մտածողներ , ազգին ծով ցաւերուն դարման և ապաստանի փնտռողներ լայն շունչ մը առին . տեսնելով վերջապէս Պատրիարքական Աթոսին վրայ բազմիլը այնպիսի եկեղեցականի մը , որ իր իւրաքանչեւ իրաւունքներով և բարձր զարգացումով , և անոր հաւատարմ աշակաջանք ու խիզախ նկարագրով ամէն յոյս կը ներշնչէ իրական օգտակարութեան մը՝ ներկայ գծուակ ժամանակներուն մէջ :

Նորընտիր Ս . Պատրիարքը , բնիկ Պոսեյի , նախնական կրթութիւնն ստանալէ ետքը Թօքատիուի վարժարանին մէջ , մտած է Կաթողիկոս Սէրայիֆ Լիաճնի՝ այդ վարժարանին ամէնէն փայլուն չրջանին : Նոյն վարժարանի չրջանն աւարտելէ ետքը պետական ծառայութենէն — ուր մտնելու ամէն դիւրութիւն կար — նախընտրեց ուսուցչական առարկէն բաց քիչ ժամանակ ետքը , հոպիւ 24 տարեկան հասակին մտաւ եկեղեցականութեան մէջ , 1878ին Սկիւտարի Ս . Կարապետ եկեղեցւոյն մէջ վարդապետ ձեռնադրուելով հոգեւոյս իգմիրեան Ս . քն ,


Դուրեան Տ. Եղիշէ և վաղամեռիկ Սր-
ծիւեան Տ. Մատթէոս վ. ներուն հետ: Դեռ
նոր ձեռնադրուած՝ պահ մը Ռօստոմբօ գնաց
իրբե քարոզիչ և ուսուցիչ: Յետոյ քարոզ-
չութեան պաշտօններ վարեց Պալատ, Նա-
լլ Գափու, Կէտիկ փաշա ևն., այդ միջոցին
Վարչութեան անդամ և երեսփոխան ըլլա-
լով մինչև 1895, երբ Առաջն. տեղապա-
հի պաշտօնով Պրուստ գնաց, ուր ժամա-
նակ մը մնալէ ետքը Խրիմեան Ս. Կաթո-
ղիկոսէն եպիսկոպոս ձեռնադրուեցաւ իրբե
առաջնորդ Պրուսայի: Այդ պաշտօնին մէջ
կրցաւ լաւ յարաբերութիւններ ձևակել
կուսակալներուն հետ, կարեկիտութեանսահ-
մանին մէջ ծառայելով ժողովուրդին, և
պաշտպանելով անոր շահերը: Ազատու-
թեան չրջանին մէջ ինքնաբերաբար հրա-
ժարեցաւ առաջնորդութենէ, և Պոլիս ե-
կաւ ուր ստանձնեց Սկիւտարի Ս. Կորու-
սեա եկեղեցւոյ քարոզչութիւնը: Սահմա-
նադրութեան հաշակումէն ետքը վարած
Պատր. Տեղապահութեան կարծառեւ չըր-
ջանին յարաբերական գործերու մէջ կա-
րողութիւն ցոյց տուաւ, և իրր լեզուա-
դէտ և զարգացեալ անձնաւորութիւն՝ ներ-
կայանայի դէմք մ'ըլլալը հաստատեց օ-
տարներու առջև: Պրուստ երթալէ առաջ
ընտրուած էր Երզնկայի Հայոց առաջնորդ,
և իրր այն մասնակցած Խրիմեան Ս. Կա-
թոլ. ընտրութեան, բայց տկարութեան
պատճառով չէր կրցած իր Վիճակն երթալ:
Արշարունի Սրբողան 30է աւելի տարի-
ներ եկեղեցւոյ և ազգին ծառայած ըլլալուն
հակառակ, անշահախնդրութիւնն ա՛յն աս-
տիճանին հասցուցած է որ -- չառ մը բարձ-
րատիճան եկեղեցականներու աննման --
չէ կրցած նիւթական լաւ պայմաններ ա-
պահովել իրեն: Ասիկա մեծագոյն առաւե-
րութիւն մըն է ուէ եկեղեցականի համար,
և մենք վստահ ենք թէ միեւնոյն անշա-
հախնդրութիւնը և ազգասիրութիւնը՝ իր
անմխտելի ձեռնհասութեան միացած՝ պիտի
կրնան յիշատակելի գործունէութիւն մը
ապահովել իրեն՝ իրբե Թուրքիոյ Հայոց
Պատրիարք:

Կը մնայ ազգին բոլոր հատուածներուն՝
կուսակցական ուէ նեղմիտ հայացքներէ

վեր՝ տիպար համերաշխութեամբ մը և
սեղմ շարքերով բոլորուիլ Ն. Սրբազնու-
թեան շուրջը. միահամուռ ջանքերով դար-
ման տանելու համար դաւառի տագնապա-
լի վիճակին -- զոր Օսմ. Խորհրդարանի մէջ
պաշտօնապէս խոստովանեցաւ վարչապետ
Սախտ փաշա --, և յառաջ վարելու այս
տառապեալ ազգին անտեսական, խմացա-
կան և հոգեկան վերականգնումի գործը:

* * Նորընտիր Ս. Պատրիարք Հօր պաշ-
տօնը շնորհաւորելու համար բազմաթիւ
եկեղեցական և աշխարհական անձնաւորու-
թիւններ այցելելին Ն. Սրբազնութեան:
Դաւառ. առաջնորդարանները, էջմիածնայ
և Սոյ կաթողիկոսութեանց, Երուսաղէմի
Պատրիարքութեան ևն. հեռադրուեցաւ ընտ-
րութիւնը Ն. Սրբազնութեան, որուն ամէն
կողմէ շնորհաւորական հեռազրկ ևս կը
հասնին:

* * Հայ-հռոմէականաց Վարչական Խոր-
հուրդը պատգամաւորութիւն մը կազմած է՝
իր ղեկանէն և երկու անդամներէ բաղ-
կացեալ՝ որոնք Ս. Պատրիարք Հօր պաշտօնը
վաւերացուելէ ետքը, շնորհաւորական այ-
ցելութիւն պիտի տան: Հայ-հռոմէականաց
Երեսփ. Ժողովոյ Ասեմապետ Երամ էֆ.
Դ. Ն. առաւօտ այցելեց Ն. Սրբազնութեան,
ընկերակցութեամբ Ազգ. Ժողովոյ ատենա-
պետ Մանուկ էֆ. Ազարեանի: Հայ-հռո-
մէական ազգայինք Արշարունի Ս. ի Պատր.
ընտրութեան առիթէն կ'ուզեն օգտուել,
վերահաստատելու համար Թերզեան Պատ-
րիարքի անխորհուրդ ընթացքին հետևանք
դադրած յարաբերութիւնները. ընթացք՝
որուն համամիտ չէր աշխարհական տարրը:



ԱՆԱՏՈՒՄԻ և Բուսիկի բարեկար-
գութեան հարցը խորհրդակցութեան ա-
ռարկայ եղած է Նախարարաց Խորհրդոյ
մէջ, որ որոշեց յանձնաժողովներու քըն-
նութեան ենթարկել զայն: Անատուրի բա-
րեկարգութեամբ զբաղող յանձնաժողովը,
որուն կ'անդամակցին Պատերազմական,
Ներքին Դատական և Հանր. Շինութեանց
նախարարները, պիտի քննէ թէ Հայ ե-
րեսփոխաններու մատուցած յիշատակադրով

եղած պահանջումները գործադրելի՞ են, և ո՞ր աստիճան կը համապատասխանեն բարեկարգութեան պէտքին: Մաղթենք որ նոր յետաձգման մը առիթ չըլլայ ասիկա:

ՕՐՄԱՆԵԱՆ Ա. Ի խնդրոյն քննութիւնն աւարտած է Ատենապետաց դիւանը, և իր տեղեկագիրը կը մատուցուի Ազգ. ժողովոյ յառաջիկայ նիստին:

ԲԱՆԿԱԼԹԻ ղերեղմանատան խնդրը սուր հանգամանք մը առաւ շարժում: Լըսուելով որ Քաղաքապետութիւնը գիշերայն որոշած է վիցնել գերեղմանատան պատը և կատարուած իրողութեան մը առջև զնել ազգը, Բերայի խումբ մը ազգայիններ զիմում ըրին Քարոզիչ Տ. Հմայեակ Ս. Ի և Թաղ. Խորհուրդին, յայտնելով որ եթէ ազգը չկարողանայ իր իրաւունքը պաշտպանել, ժողովուրդը ինք պիտի ղիմադրէ այդ ոսնձգութեան: Այսպիսի վիճակէ մը առաջ զայիք անտեղութեանց ի նախատեսութիւն, Տ. Հմայեակ Ս., ընկերակցութեամբ Հալաճեան, Ֆէրհատեան Տ. ք. Ճէլլուրեան էֆ. ներուճ գիշերայն նախ Բերայի կառավարչին այցելեցին, բայց հոն չգտնելով՝ վարչապետ Սախա փաշայի բնակարանը գացին, որ խնդրոյն ստիպողականութեան վրայ, անկողնէն ելնելով ընդունեց զիրենք, և խնդրոյն տեղեկանալով, անմիջապէս հեռագրեց և հեռաձայնով խօսելով ներքին գործոց նախարարին հետ, յանձնարարեց որ պատին փլցուիլը յետաձգուի, մինչեւ որ ճշդուի խնդրը Պատրիարքարանի և կառավարութեան միջև: Հեռագրով նոյն հրահանգը տուաւ նաեւ քաղաքապետին:

* Քաղաքապետութեան առաջարկին վրայ, Խաւն ժողովը Դ. օր յանձնաժողով մը կազմեց, Քաղաքապետութեան հետ բանակցելու և արդիւնքը հաղորդելու համար:

ՍԵՐԱՍՏԻՈՅ մէջ մեռեր է Կարապետ աղա Լէյլէկեան, որ ակույն հիւանդանոցին կառկած է 300 ոսկի արժէքով իր մէկ սուռնը:

ԿԵՍԱՐԻՈՅ Դաւառ. ժողովը Առաջնորդը ընտրած է Տ. Խոսրով Մ. Վ. Պէհրիկեանը: — Նոյն քաղաքէն Պատրիարքա-

րան կը հեռագրեն թէ նախորդ առաջնորդ Տ. Տրդատ Եպ. Պախան արդար եղած է իր հաշիւներուն մէջ:

ՊՕՏՐՈՒՄԻ հայ բանտարկեալները ազերսպի նամակ մը գրած են Պատրիարքարան, որպէս զի Ծնունդի առթիւ ղիմումներ ըլլան զիրենք արձակել տալու համար:

ԴԱՏԱԿԱՆ նախարարութիւնը, Պատրիարքարան ուղղած թեգիւրեով մը, Զարսանձագի խնդրոյն վրայ մատուցուած թագիրին առթիւ կ'ըսէ թէ Ազգ. մանադրութեան պարունակութեան և նըպատակին համաձայն, Պատրիարքարանը իրաւասութիւն չունի հարսանարութեանց դէմ խնդիրներ յարուցանելու: Տարօրինակ է որ ազատութեան այս շրջանին մէջ Պատրիարքարաններուն կը զլացուի բողոքի իրաւունքը, իրաւունք մը զոր ամէն օսմանցի անհատ ունի!!!

ՄՈՒՇԻ երեսփոխան Գեղամ էֆ. հեռագիր ստացած է թէ «չըջակաները կը շարունակուին սպանութիւնները և թալանը, ժողովուրդը սարսափի մէջ կը գտնուի, տեղային կառավարութիւնը միջոցներ ձեռք չէ առած»: Գեղամ էֆ. զիմեց ներքին գործոց նախարարութեան, որ ըսու թէ կուսակալը միջոցներ ձեռք առած է և ինք ալ նոր հրահանգներ պիտի տայ: Կը լսուի թէ փոփոխութիւններ պիտի մտցուին տեղային պաշտօնէութեան մէջ:

ԱՌԺԱՄԵԱՅ պաշտօնով Սամսոն զրկել որոշուած է Տ. Երուանդ Մ. Վ. Բէրտահեան, և Աղբ. Պոլիս՝ Տ. Համաղատայ Վ., մինչեւ որ առաջն. ընտրութեան մասին վերջնական կարգաւորութիւն մ'ըլլայ:

ՈՐԲԱԽՆԱՄ Յանձնաժողովը, որու յանձնարարուած էր օգնել հանգուցեալ Պապիկեան էֆ. ի որբերուն, կը պնդէ թէ իր պաշտօնն է Կիլիկիոյ որբանոցները միայն հոգալ, իսկ Ազգ. Վարչութիւնը կ'ըսէ թէ Կիլիկիոյ ողբալի դէպքին հետեւանօք զոհւող ազգայինի մը զաւակներն են սնոնք, և պէտք է Որբախնամը կատարէ իր պարտականութիւնը: Զարմանօք կը կարդանք թերթերու մէջ թէ որբախնամը պիտի հրաժարի այս պատճառով: Այսպէս կը յար-

զենք մենք մեր երախտաւորներուն յիշատակը: Ի՞նչ որ այ ըլլայ, այդ որբերն իրաւունք ունին ազգին յուրջ և համա-կիր հոգածութեանը, և մեղք է, անխղ-ճութիւն է մէկ մէկու վրայ հետեւ այդ հաւիրական պարտականութիւնը:

ՉՄԻԻՌՆԻՈՅ առաջնորդ Տ. Մատթէոս Ծ. Վ. Ինճէեանի գիտումին վրայ, Տիկ. Թազուր Խարթաբեան պատրաստ-կամութիւն յայտնեք է հինգ տարի շարու-նակ 200ական ոսկի նուիրել կլմապոլսի լոյսը գոյելու և վարժարանները արդիւ-նաւոր վիճակի մէջ գնելու համար: Ազնիւ տիկինը յանձն առեր է նաև տեղւոյն հի-ւանդանոցին մէջ վիրարութեան ճիւղ մը չինել սալ, որուն համար 1000 ոսկի ծախք կ'ենթադրուի:

ՄԱՅՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ վերաշինութեան խնդիրը նկատի առնուեցաւ Քաղաք ժող-վոյ վերջին մէկ նիստին մէջ, և որոշուեցաւ գիտում ընել բարեկիցատակ Թաշանճեան էֆ. օ այրի տիկնոջ, ինչպէս նաև Միհրան էֆ. Մարտանանի, հանգուցելոյն կամքին համաձայն կարենալ վերաշինելու համար նոյն վարժարանը:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԷ ԴՆ. օր սկսաւ յօդ-ուած առ յօդուած քննել Պատրիարքարանի վերակազմութեան ծրագիրը: Ա. և Բ. յօդուածները պիտիկ բարեփոխումներով ընդունուեցան, իսկ Գ. յօդուածը առիթ եղաւ բուն վիճարանութեանց, եկեղեց. և աշխարհական անդամոց միջև: Այդ յօդուածը կը սրամտորէ որ Պատրիարքա-րանը ունենայ աւագ գործակատար մը, որ իրաւունք պիտի ունենայ բանալ Պատրիարքարան եկած նամակները և կարեւոր յղումներն ընել, ի հարկին միայն խորհրդակցելով Պատրիարքին հետ: Ժողովին եկեղեց. անդամք, մասնաւորապէս Պատր. Փոխանորդ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան պնդեցին թէ Սահմանադրութիւնը արդէն պէտք եղածէն աւելի աշխարհակա-նացուցած է ազգին վարչութիւնը, բայց նամակները բանալու և յղումներ կապա-րելու գործը վերապահած է Պատրիարքին, որ ազգին քուէով և վստահութեամբ ընտ-րուած է, և ինք միայն կրնայ տեղեկու-նալ ազգին գաղանիքներուն, մինչ գործա-կատարը Քաղ. Ժողովէն կարգեալ ամսակա-

նաւոր պաշտօնեայ մ'է, և կրնայ պատահիլ որ ընդէ. ազգին վստահութիւնը վաշելով մէկը չըլլայ: Պնդեցին նաև որ Պատրիարքու-թիւնը միեւնոյն ասին հոգեւորական պաշ-տօն է, հետեւաբար չեն կրնար ընդունիլ թէ՛ այդ զիրքին և թէ՛ սահմանադրու-թեան շատ օրոշ տրամադրութեան հակա-ռակոյ բան մը: Նախագահ Տ. Վահրամ Ս. Արքեպ. Մանկունի ևս համամիտ գտնուեցաւ եկեղեց. անդամոց: Խառն ժո-ղովէն ետքը գումարուած կրօն. Ժողովին մէջ ևս խնդիր եղաւ այս կէտը, և ժո-ղովը արձանագրեց իր մերժումը, վերո-գրեալ նկատողութեամբ:

ԵԳԻՊՏԱՀԱՅ երեւելիներէն Աբրահամ փաշա Բարթող, ծանօթ իր բարեգործու-թիւններով, մեռած է Աղեքսանդրիա 60 տարեկան, և մեծահանգէս յուզարկաւո-րութեամբ թաղուած է հանդ. Թազուր փաշայի գերեզմանին քով:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ընտրելեաց քառա-նուն յանկը կը պատրաստուի այսօր, Շա-բաթ, իսկ կաթող. վերջնական ընտրու-թիւնը՝ վաղը, Կիրակի:

ԼՈՆՏՈՆ ԵՒ ՄԱՆՉԵՍԴԵՐ բնակող Հա-յիր՝ հայարնակ նահանգներու մասին եղած հրատարակութիւններէն ղգածուելով, հա-ւաքական գիտում ըրած են Օսմ. խոր-հրդարանի նախագահ Ահմէտ Բիգա պէյի, Հայոց ենթարկուած դառն վիճակին աղու-դարման մը խնդրելով:

Ս. ՊԱՏՐԻԱՐԷ ՀՕՐ ՊԱՇՏՈՆԻՆ ՎԱԽԵՐԱՅՈՒՄԸ ԵՒ ՌԻՍԸ

• Խառն ժողովը ԴՆ. օր խմանալով որ Ս. Պատրիարք Հօր պաշտօնը վաւերացուած է, որոշեց որ այս շաբթու. իսկ կատարուի ուխտի արարողութիւնը, և Ն. Սրբազ-նութիւնը ձեռնարկէ պաշտօնին: Ըստ այսմ, Մայր Դիւանի կարգադրութեամբ Այդ. Ժողովը նիստ գումարեց երէկ, Ուրբաթ, Մայր եկեղեցի, Ս. Պատրիարքը հանդի-սաւոր գնացքով Բերայի իր բնակարանէն առաջնորդուեցաւ Գում-գափու, ուր՝ Մայր եկեղեցւոյն մէջ՝ Ն. սրբազնութիւնը կատարեց իր ուխտը:

Արտօնատէր

ՀԱՅԵԱԿ ՔԷՆՅ. ԷՔԵՐՃԵԱՆ

ՏՅՈՐԷՆ-ԽԱՐԱԳԻՐ

ՀԱՐՄԱՅՐ ԲԷՆՅ. ԿԷՋԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՅՈՒՄԱՆ

Տ Ա Ճ Ա Ր

ԻԼԱՎԷ № 48, 1911 ԴԵԿՏ. 10

“ՏԱՃԱՐ”ԸՆ ՄԵՍԼԵՔ Ի ԱԹԻՍԻ

Մալիւմ տիւր քի, ասրըմըզըն զարուրի իւլ իճրա օլան մէթալիպինտէն պիրինճիսի ախլէազ տըր: Ախլէաճ, բուհանի հայաթտա. ախլէաճ, ճիսմանի հայաթտա. ախլէաճ, թիճարէթտէ, սէն'աթտա, հէր քէսաէ վէ հէ'ր շէյտէ: Թաւղըհա հաճէթ կէօրմէյօրըզ, չիւնքի էֆքեարըմազըն սըազը, ախլէազ'ըզլարըն հէր հալ ու քեարտա ատէմի միւվաֆազիյէթլէրի իլէ մուսատտազ վէ միւտէլլէ տիր:

Էվվէթ, բուհ' ախլէազ իլէ, ֆազաթ ախլէազ տա ՄէՂՂէՊ իլէ եաշար: Պիլ, տիւնեա իւզէրինտէ հիշ պիր սա'իզ թասալվուր էտէմէյիզ քի, թէհլիյալ ի ախլէազա մէզհէպ տէրէճէսինտէ խըամէթ իսէպիլսին: Պինաէն ալէյ' մէզհէպսիզ ախլէազը, բուհսըզ ճիսմ' մէրթէպէսինտէ կէօրիւր, վէ իշթէ պու սէպէպտէն տիր քի, նաշիյանէ տէրէօհտէ էթմիշ օլաուզումուզ վազիֆէնին մէսուլիյէթ ի մանէվիյէսինի տէրք էտէրիզ:

Իշթէ պիզ, մինգայրը հատտին, պու հիսպէ միւթէհասսիս պուլունտուլումուզտան, պիւթիւն մէվճուտիյէթիմիզլէ արզու էտէրաիք քի, պու կիւն սէվկիւլի միլլէթիմիզ արաւընտա, ախլէազը հազըզընըն թէալի վէ թէրազըսընա խատըմ' օլմազ իւզլէ, պիրտէն չօզ զիյատէ ՏԱՃԱՐլար պուլունտուն. ֆազաթ, մա'էլէսէֆ, մատամ քի ումում' Թիւրքիա Էրմէնիլէրիմիզ իչիւն չիմտիլիք պու մուհիմմ վազիֆէյի տէրէօհտէ էտէն եէկեանէրիսալէ ՏԱՃԱՐ արը, էօյլէ իսէ, պարի պու' Թէֆ Տաճաւըն օլսուն, միլլէթիմիզլին իհիյաճաթը բուհանիյէսինէ, միւմքին ի մէրթէպէ հիւնի խըամէթ էտէպիլմէսի շարէլէրինի թէհարրի վէ թազալըզ էթմէյի էն մուզատտէս պիւր վազիֆէ աուտ էտէրիզ: Էզճիւմլէ, մա'էթթէչէքքիւր, իթիրաֆա մէճպուրըզ քի, սէվկիւլիւ վէ տիյանէթրէրվէր միլլէթաաշարըմըզ թարաֆընտան, ՏԱՃԱՐըն իքի սէնէտէն պէրի մազհար օլակէլսիյի թազաթիւթ, թէրղիպաթ վէ թէշվիզաթ աաթի, իշպու վազիֆէնին հիւնն ի իյֆասը զըմնընտա իւզէրիմիզէ պիւր պարը վիճտանի թահմիլ էթմէքտէ տիր:

ՏԱՃԱՐ, անգարիպ իքլինճի սէնէսինի իթմամլէ, պիալն Ուլլահ, իւչիւնճիյէ գասէմնիհատէ օլմազտա տըր: Կէչէն, շու իքի սէնէլիք հայաթընտա կէօրիւլտիլի կիպի, պունտան սօնրա տաթի (վէ տահա զիյատէ տըզգաթ ու իթինա իլէ) Տաճաւր գարիլէրինէ, պէր մինվալը սապըզ, էրմէնիճէ լիսան վէ եազը իլէ, օն ալթը սահիֆէտէն իպարէթ օլմազ, մէզհէպի, ախլէազի, ֆէննի, իլմի վէ միլլի միւֆիտ վէ թէնվիլի էֆքեարա խատըմ' մէզալաթը միւհթէվի պուլունմազ իւզլէ արզը վիճուտ էյլէյէճէք տիր: Փազաթ պու հալ քեաֆի' մի տիր.—ԽԱՅՐ:

Խա՛յր ախօրըզ, չիւնքի էօթէտէ լիսան ը մատերզատլարընա զայլը վազըֆ պուլունան միլէթտաշարըմըզ տա նազարը տըգգաթտան տուր թութմամագ մէճպուրիյէթինտէյիզ քի, մաէթ թէէսիւֆ, մուհիմմ պիր եէ-քիւն թէշքիլ էթմէքտէ տիրէր: Պիր քէրրէ Խիւտավէնտիկեար, Մամիւ-րէթ իւլ ազիզ, Դօնեա, Լնգարէ, Ատանա վէ Հալէպ վիլայաթ վէ միւհա-դաթը կէօզ էօնիւնէ կէթիրիլսին, հէր կիւն արզը իհթիյաճ էթմէքտէ պուլունան իշպու էհլի թագվա վէ մուազգէզ գարտաշարըմըզ գարշը գուլագլարըմըզ՝ մը թըգայալըմ:—ՀԱՇԱ՛:

Լվվէթ, պիր զազէթա ինթիշարընըն գուրու լաֆա տէյիլ, մատտի վէ մանէվի բէք պէօյիւք ֆէտաքեարըզլարա վապէսթէ պուլունտուլունու, հասպէլ մէսլէք, թագտիր էտէրիզ, ծագաթ պիզ իշպու ֆէտաքեարըզլա-րըն հէման քեաֆֆէսինի տէ կէօզէ ալարազ, իւչիւնճիւ սէնէտէն իթիպա-րէն, ՏԱՃԱՐըն Լըմէնիճէ օն ալթը սահիֆէլէրինէ, սէքիզ սահիֆէ տէ թիւրք-ճէ (էրմէնիճէ եազըլարա) իլավէ էտէճէյիզ քի, իշպու թիւրքճէ գըմ տախի պիր թագըմ մէզհէպի, ախէազի, էտէպի մէգալէլէր, հաֆթալըզ հավատիտաթը միլլիյէ վէ Հայաստանեայց Ուղղափառ Քիլիսամըզըն մէ-րագավէր թարիխի, վէ օնուն շանը վէ գանը մադիսինին հայրէթ պախշ լէվհալարը իլէ միւզէյլէն պուլունաճագ տըր:

Նէտէ՞ն պու ճիւրաթ. ապօնըման զամընա իսթինա՞տէն մի.—Խա՛յր. չիմտիյէ գատար օն ալթը սահիֆէլիք ՏԱՃԱՐըն պէտէլի սէնէվիսինին եա-լընըզ 40 զըշ. օյտուղու կիպի, պունտան սօնրատա ԵիՅիՐՄԻ ՏէՕՐԹ տա-հիֆէլիք ՏԱՃԱՐ՝ եինէ 40 զըշ. տըր. իշպու ճիւրաթքեարանէ թէրթիպտէ, պիղիմ եէկեանէ իսթինատկեաճըմը տինտար վէ մէզհէպիէրէսթ միլլէթ-տաշարըմըզըն, իպզալընա էմին պուլունտուլումուզ, համիյէթ վէ ըազպէթի տիր. Պիզ, էօթէտէն պէրու «էվվէլ խըսմէթ վէ սօնրա թագտիր» քրէնսի-րիսի թէագըպ էտէկէլտիլիմիգտէն, իշթէ վաճիպիւլ իյֆա սայալըմըզ պիր խըտմէթի տէրէօհտէ էտիյօրըզ. պիթ թապ, թագտիր ճիհէթինի տէ միւհթէրէմ միլլէթտաշարըմըզըն հըսըյաթը տինտարանէլէրինէ թէրք էտէրիզ:

Պինաէն ալէյհ, իշպու եէնի թէշէպպիւսիմիզ պիլա ֆատըլ իւշ այ թէճրի պէթէն տէվամ էտէճէք տիր. չայէա թէշէպպիւսիմիզին իսապէ-թինի պիլ ֆիյլ կէօրէճէք օլուր իսէք, տահա փէք չօգ ֆէտաքեարըզլար իպրազընտան հիշ պիր վէճհլէ չէրինմէյէճէյիմիզ կիպի, պիրտէ թիւրքճէ օլարագ՝ հազըզը «Բաւնէ Բաւն» ըթլագընա չայան վէ պիր միլլէթտա-շըմըզըն իւշ սէնէլիք զընտան հայաթընը հարի օլան զայէթ ճալիպ վէ մու-ճիպի իսթիֆատէ ըօման տէրճինի վատ էտիյօրըզ:

Իշպու իւչիւնճիւ սէնէտէն իթիպարէն ՏԱՃԱՐա ապօնէ օլմագ արզու պուլուրան կէրէք տախիլի վէ կէրէք թաշըալը միլլէթտաշարըմըզըն, վա-զիը սուրէթտէ եազըլմըշ ատրէսլէրի իլէ ապօնըմանլարընը, Տէրտատէթ, Պէշիթթաշտա Էրմէնի քիլիսասընտա Տ. Զարմաշր իհնյ. կէզիւրեան նա-մընա չըգարմալարը պիլխաստա թափսիյէ օլունուր:

“ՏԱՃԱՐ” Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ գաւառաց՝ տարեկան	40	դրու
Արսասահմանի համար	»	10 ֆրանկ
Ռուսիա	»	4 ռուբլի
Ամերիկա	»	2 օլար
Չեռէ կը ծախուի պրակը	40	փարա

Հինգ լաժանդը գանդը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ՕՍՄ. ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

سُكُتْ تِجَارِيَّةٌ عِثْمَانِيَّةٌ

SOCIÉTÉ COMMERCIALE OTTOMANE

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 100,000 ՕՍՄ. ՈՍԿԻ

Կեդրոնացեղի՝ Կ. ՊՈԼԻՍ

ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԴՐԱՍԵՆԵԱԿՆԵՐԸ ԱՌԺԱՄԵՍԻ ԿԵՐՊՈՎ ՀՍՍՏԱՏՈՒԱԾ ԵՆ

ՍԹԱՄՊՈՒՆ, ԴԱԹԸՐՃԸՐԴՈՒ ԽԱՆ

Հայկական սոյն գրամական հաստատութիւնը կ'ընէ փոխատուութիւններ՝ առեւտրական ստաներու, մուրհակներու, փոխանակագիրներու, բաժնեթուղթերու, պարտաթուղթերու, ապրանքներու և բեռնագիրներու վրայ:

Կուտայ չէքեր, վարկագիրներ, փոխանակագիրներ և հեռագրական վճարումի հրամաններ՝ ինչպէս Թուրքիոյ, նոյնպէս աշխարհիս բոլոր մասերուն վրայ:

Կը զնէ և կը ծախէ ամեն տեսակ բաժնեթուղթեր և պարտաթուղթեր, թէ՛ մեր և թէ՛ բոլոր օտար հրապարակներուն վրայ, ինչպէս և օտար դրամներ:

Կը գանձէ և կը զեղչէ առեւտրական ստաներ, մուրհակներ, փոխանակագիրներ, բաժնեթուղթեր և կտրօններ:

Կ'ընդունի գրամական աւանդներ նպատաւոր պայմաններով:

Դրամատունս հաստատած է Առեւտր. տեղեկութիւններու համար լաւագոյն կերպով կազմակերպուած սպասարկութիւն մը:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ

Խնայողութիւնը մեր հաւայեցիկն մեջ քաջաշէրտու հաւատ կ'ընդունի

խանութիւն (25) դրուշէն սխեդով գումարներ

Դրամատունս կը կատարէ նաեւ, թէ՛ իր հաշուոյն, թէ՛ մասնակցութեամբ և թէ՛ ուրիշներու հաշուոյն ամէն տեսակ արդիւնաբերութիւններու և ապրանքներու գնում, վաճառում, փոխանակութիւն, ներածում և արտածում:

Կ'ընդունի ներկայացուցչութիւն թէ՛ առեւտրական և թէ՛ օտար տուններու:

Կը կազմէ առեւտրական և ճարտարարուեստական ընկերութիւններ և կը մասնակցի անոնց: Կ'ընէ հանրագումար շինութեանց վերաբերեալ ամէն տեսակ ձեռնարկութիւններ:

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
րիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բհնյ. Պողար-
եան
ԱՏԱՐԱՋԱՐ. — Տ. Սերոբէ Բհնյ. Պուր-
մայեան
ԱՏԱՆԱ. — Տ. Կարապետ քչյ. Երե-
ւանեան
ԱՖԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնեկեան
ԲԱԲԵՐԴ. — Մ. Սանտեան էֆ.
ԲԱՂԷՇ. — Առաջնորդ Տ. Սուրէն Ծ. Վ.
Գարէմեան
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Եղիշէ
Բհնյ. Արամեան
ԶՄԻԻՆԻԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջն. Փոխանորդ Տ. Ներսէս
Ա. Բհնյ. Վահանեան

ԿԻՐԱՍՈՆ. — Տ. Սրապիոն Բհնյ. Այրսեան
ՀԱԼԷՊ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մուրատեան
ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ռակի Բհնյ. Պրպիեան
Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան
ՌԻՇԱՔ. — Տ. Յարութիւն Բհնյ. Աստարազ-
եան
ՊՐՈՒՍԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Վար-
դան Ծ. Վ. Գապարեան
ՊԱՆՏՐԹԱ-ՊԱԼԷՔԻՍԻՐ. — Տ. Կուսմի Բհ.
Յիրգաթեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքճեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըշ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Ապանեան
ՍԵՖԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաշեան
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բհնյ. Տրեզ-
եան
ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏՐԱՊԶՈՆ. — Առաջնորդ Տ. Սերոբէ Վ.
Սամուէլեան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառճա-
պետ Բհնյ. Քիւպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖՐԷԶՆՕ. — Յակոբ էֆ. Նիկեան

ԳԻՆ 1 ՂՐՈՒՇ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄՆ

Զաւակահար, Յակոբեան Խան

Կ. ՊՈԼԻՍ